

# ՎԵՐԺԱՐՄԻ

ՄՈՆԱԿԱՐՁԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՒԹ

ՓԵՏՐԻԱՐ

1884 Բ. ՏՈՐԻ

№ 3

ԽԾԲԱԳԻԹՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«ՊՈ.ԲՀԱ.ԲՈ.ՆԲ» Ա.Ռ ՃԱՄԱՆԱԿԵԱՅ ԴԱՏԱԲՈՒՐԸ

Կրթութեան գործն այնքան է գրաւել հայ հասարակութեան միտքը, որ կարծես մեր ժոմանակի նշանն է զառել մտածել, խօսել և դրել միմիտին նորա վերաբ։ Այս երևում է նոյն իսկ հասարակութան կեանքի արտայալութիւններից. ամեն ուղղ օրբստորէ աւելանում է Հայոց ուսումնարանների թիւը. ամեն կողմից աճում է իւրաքանչիւր կորպի ուսումնարաններում կրթուող հայ աշակերտների քանակութիւնը. Հայ հրապարականութիւններն անդադար հանդիս են գալիք կրթութեան գործին վերաբերեալ լօգուածներով, քննութիւններով և առաջարկութիւններով. մասնագետ տնձինք չեն գոգարում որբստորէ հարստացնել նորանոր դաստիքների և ձեռնարկների թիւը. հետզհետէ զորգանում է երիտասարդութեան ձգուումը՝ զպլոցի միջոցով հասարակութան կրթութեանը ծուռալելու. զեղեցիկ սեռն անգամ հեռու չէ այդ վսեմ գործի միջամտութիւնից և կարծեամանակի մեջ ցուց տաւեց թէ որքան բազմարդիւն և անփոխարիննելի է նորա մասնուկցութիւնը. ի վերջու կարծես մի էսկան պահանջ է դառնել այսօրսուու հասարակութեան համար տեղական և ընդհանուր մանկավարժական ժողովներ կաղմել, ծրագիրներ մշակել, բարենորսուածներ նոցնել կըրթութեան գործի մեջ ևուլին:

Աղբու կամ թոյլ կերպով երեցած այս նշաններն առ հաստիք այն ժամանակ կարող են զարգանալ և հասնել պատշաճաւոր նշանակութեանը, երբ որ դպրոցական գործին վերաբերեալ բոլոր խնդիրներն ընդհանուր կշռադատութեան հանդէս բերուին և հրապարակաւ, մշակուին: Այս գործին կարող է մեծապէս նպաստել մամուլը. և ահա, ի թիւս արլոց, արդպիսի մի բարի խորհրդով ծնան Հայոց մէջ և չը կարողանալով հանգամանքներին դիմադրել՝ անհետ եղան հետզհետէ «Դպրոցը», «Դաստիարակը» և «Մանկավարժական թերթը», որոնք բոլորն էլ շատ կամ սակաւ չափով նպաստում էին մշակելու ժամանակին կրթութեան էական հարցերը. ի վերջոյ 1832 թ. Օգոստոս ամսի 15-ին, երբ բացուելու էր Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժարդովը, «Վարժարանին» վիճակուեցաւ առաջին անգամ թարգման հանդիսանալ այնպիսի մտքերին, և գաղափարներին, որոնք նաև լով իրանց նպատակին, չէին կարող ընդարձակութիւն գտնել առօրեայ խնդիրներով սկարապով թերթերի մէջ:

Իւր միամեալ գոյութեամբ «Վարժարանը» ցոյց տուեց իւր գոյնը և մենք այսօր կարող ենք ներկայացնել հասարակութեանը մի շարք ծանրակշիռ հարցերի լուսաբանող. և առաջնորդող գրաւածքների, որոնք մեծապէս նպաստելու են կրթութեան գործը գիտակցաբար առաջ վարելու: «Վարժարանը» ձգտում էր հանդէս բերելու նոյն իսկ մեր կեանքի մէջ լայտնի հայ մանկավարժների աշխատութիւնները, որով միջոց տուեց հայ հասարակութեանն անմիջապէս ծանօթանալու իւր դաստիարակութեան առաջնորդների հետ, սիսալ են թէ ուղիղ նոցա կարծիքները, համակրելի են թէ ոչ նոցա աշխատութիւնները, իրագործելի թէ անիրազործելի են նոցա առաջարկութիւնները, այդ պէտք է ցոյց տար ժամանակի ընթացքում հասարակական ձախնը, ապաբախտաբար «Վարժարանի» խմբագրութիւնն երկրորդ տարեմուտին ծանօթանալով բաժանորդների աննշան քանակութեանն, սրտիպուած էր ընդմիջել ամսատետրերի հրատարակութիւնը մինչև ներկայ փետրուար ամիսը, որպէս զի բաւականաթիւ

բաժանորդ ունենալով, կարողանար թերթի հրատարակութեան ձախող, եթէ ոչ լիսպին, գէթ մասամբ լըացնել:

Սկսպէս չորս ամիս շաբունակ դադարելուց յետով, մենք նորից ձեռնախմում ենք լինում «Վարժարանի» հրատարակութեանը: Այս չորս ամսուալ ընթացքում հանդիսիս բաժանորդների թիւը թէւ զգալի կերպով չաւելացաւ, բայց և այնպէս մենք մանկավարժական օրդանի կարեսորութիւնը շատ կարեոր համարելով, վճռեցինք ամենալին տեսակ գժուարութիւններին լաղթելով, շարունակել նորա հրատարակութիւնը: Եթէ մինչեւ այժմ հայ դպրոցների զեկավարները չը կամեցան պահպանել մեր հանդիսի գոյութիւնը, այսուհետեւ յոյս կայ նորան ապահովել: Շատ տեղերից մեր ստացած տեղեկութիւններին նայելով պարզ նկատում ենք, որ մի մանկավարժական հանդիսի գոյութիւնը գարձել է անհրաժեշտ կարեսը նեցուակ մեր ուսուցիչների լայնածաւալու և նուիրական գործունէութեան մէջ: Դժուար է ի հարկէ ենթադրել մի մասնագիտական հանդիսի գոյութիւնը, որ նոյն մասնագիտութեամբ պարապող անձանց չէ հետաքրքրում և հետևապէս իւր նպատակին չէ համուամ: Մենք պարծենալով մեր բազմաթիւ հայ դպրոցներով և նոյն մէջ աշխատող հայ ուսուցիչներով, ապարդիւն կը համարէինք նոյն աշխատութիւնը, եթէ նոքա մանկավարժական գիտութեան մասին փւրեանց տեղեկութիւնները մերթ ընդ մերթ չը նորոգէին և այդ գիտութեան վերաբերեալ նորանոր զարթածինդիրներին չը հետևէին: Քանի ու քանի հարցեր թէ կարգապահական թէ ուսումնական, որոնք ծագում են դպրոցական կեանքի մէջ; մնում են անբացատրելի և անվճիռերեմն հէնց այն պատճառով, որ մեր դպրոցների զեկավարների ալդ կողմից ունեցած մանկավարժական գիտութեան պաշարը թերի է լինուամ կամ անճիշտ: Ապա ուրեմն որտեղից պէտք է լրացնեն հայ դպրոցներում աշխատող անձինք այդ թերութիւնը, եթէ ոչ հետեւելով արդի մանկավարժութեանը: Եւրոպական և ռուս լեզուներով հրատարակուած մանկավարժական հանդէսները նոցանից շատերին անմատչելի են, մնում է որ հայ հանդիսի միջնորդութեամբ գոնէ:

կարողանան, նոքան ծանօթանալ, այդ գիտութեան վերաբերեալ, նորանոր զարթած խնդիրներին և այդպիսով լրացնեն իւրեանց, թերի մնացած պաշարը, Ահա ալս և ջատ, ուրիշ կէտերի վերայ, հիմնուելով մենք շարունակում ենք, «Վարժարանի», հրատարակութիւնը, հաւատացած լինելով, որ ալս անգամ, և նոքան, որոնց կողմից մեր հանդէսը մինչեւ այժմ արձագանք չը գտաւ, ալսուհետեւ ի դերեւ չեն հանիլ մեր յուսերը առաջարարածուար սառն անտարբերութեամբ չեն վերաբերուիլ, նորան»:

«Վարժարանի», ալս առժամանակեալ գաղարումը, ինչպէս պէտք էր ապասել, շարժեց մի ընդհանուր կարեկցութիւն և ամեն կողմից լսեցինք, համակիրութեան ձայներ, թէ խօսքով և թէ նսմակներով, նոյն իսկ մեր մամուլը չը զլացաւ ժարդման վիճելու հասարակական ձայնին, յայտնելով իւր ցաւն այն կորուստի, մասին, որ պիտի ունենար Հայոց մանկավարժական գործը, «Վարժարանի» խափանուելով, բացառութիւն կաղմեց այդ գէպքում միայն «Մշակը», որ ոչ միայն ուրախացաւ «Վարժարանի» խափանման վերայ, այլև նորա այն լարգելի աշխատակիցներին, որոնք երբեմն իրանց հըմատ, գրչով զարդարում էին «Մշակի» էջերը, պատուեց իւր անտեղի լարձակմունքով: Մենք նոյն իսկ «Վարժարանի» անցեալ տարուալ, № 10 յատնեցինք, թէ ամեղ համար թանկ էր հայ մամուլի քննադատական յօդուածներն, ու կարծիքները» և սլապասում էինք լուրջ քննադատութեան, ցաւում ենք որ «Մշակը» տարօրինակ մտքեր է յալտնում՝ առանց հիմնելու իւր կարծիքը «Վարժարանում զետեղուած յօդուածների լուրջ ուսումնասիրութեան վերայ, որով նա աւելի օգուտ տուած կը լինէր գործին»:

Այս Մամուլի արդար և գործնական քննադատութիւններից «Վարժարանն» ամենայն սիրով պատրաստ է օգուտ քաղել ապակայ, հրահանդութեան համար, եթէ որև իցէ արժանաւոր կարծիք լսելու լինի: Իսկ ինքնահաւանութիւնն և իմաստակութիւնը «Վարժարանի» մէջ տեղ չունին:

«Վարժարանի» ներկայ հրատարակութիւնը, ինչպէս կը տեսնէ քննթերցողը, պիտիում է իւր տուածնուայ ընթացքը:

Մանկական բաժինը մենք բաց ենք թողնում և մի ամբողջ թերթ, որ մասնագրուած էր նորան, յատկացնումենք Մանկավարժական բաժնին: Մանկական ընթերցանութեան համար նիւթեր առանձին հրատարակուած գրքուկների մէջ էլ շատ կան: Մանաւանդ թերի է շատ դպրոցների հասուն հասակի սաների համար ընթերցանութեան պաշարը: Այս նպատակով մենք աւելի քան թէ տուել ենք. այսուհետեւ էլ կը տանք ալդ հասակի զարգացման համապատասխան յօդուածներ գիտութեան ամենայն տեսակ ճիւղերից: Շատ անգամ մենք ականատես ենք եղել թէ ինչպէս մեր միջնակարգ դպրոցների և դպրանոցների սաները շուարած թերթելիս են եղել մանկական հասակի համար լոյս տեսած և հրատարակուած գրքուկներ իրանց զարգացման համապատասխան յօդուածներ մէջը չը գտնելով: Երբ մանկան մէջ ընթերցանութեան ճաշակը զարթեցնում ենք ըսկըզբում տալով նորան նորա հասակին համապատասխան նիւթեր, մեծ յանցանք է յետոյ չը տալ նորան ալնպիսի նիւթեր, որ հասակի հետ զարգացած նոցա ճաշակը պահանջում է: Բնական գիտութեան վերաբերեալ յօդուածները, յօդուածներ մկանութիւնից, (էտնոգրաֆիա), ճանապարհութիւնք, կենսագրութիւնք, աշա սոքա են այս նիւթերը, որոնք ալդ հասակի ուսանողներին կարող են հետաքրքիր լինել:

Խմբագրութիւնը նոյնպէս աչքի առաջ ուներ այն ուրախալի հանգամանքը, որ «Աղբիւրն» արդէն ծառայում է մանկական ընթերցանութեան պահանջը լրացնելուն, որին իւրաքանչանում ենք ամենայն յաջողութիւն: Այսպէս ուրեմն «Վարժարանն» այսուհետեւ նուիրելու է իւր ջանքն և ուշագրութիւնը ծնողներին և դաստիարակներին առաջնորդութիւն պատրաստող յօդուածերին և դպրոցի հասուն ուսանողների ընթերցանութեան պաշարին և ալսպիսով աշխատանքը բաժանուած կը լինի «Վարժարանի» և «Աղբիւրի» մէջ, որով անշուշտ գործը համեմատաբար աւելի մեծ յաջողութիւն կը գտնի:

\* \* \*

Չույնա մի և համարել գմբ զայ ու և ցմիւնց նույնական  
**ՊԱՐԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԱԶԴԵՑՈՒՐՔԻՆԸ**  
 յանուած մասնաւութեան նախայան և աջակայ մաքանուր  
 ունչ յէ օ՛ կը Մեր ԱՇԱԿԵՐՏԵՐԻ ՎԵՐԱՅ ամառ զի Ան  
 ուս ժիշտար մասնաւ չէ ինը պար առ և նուի ցմաւանա Ա և  
 զի Ան երեք ամեն հաստատութեանց մէջ պաշտօնեթ վարելով ամե  
 նայն առել մեկ զարմացրել է այն խոչոր հանդամակը մէկ աշա  
 կերտաները լրագիւներ կարգում են անյագ զուարձութեամբ և թէ  
 նոցա հոգեկան կեանքի բաւական նշանաւոր մասը սնունդ է ատա  
 նում մամուլի թուցիկ խօսքերով և փոփոխական զարեկերով ան  
 շուշտ այս առանց ազգեցութեան չի մնայ Արդեօք այսպիսի աղիե  
 ցութիւնից պէտք է ուրախանալ և կանուն ուր ցունաւ  
 Աւելի ճիշտ կը լինի եթէ այդ ազգեցութիւնը իրեն կատար  
 ունող իրողութիւն տեսնելով ճանաչենք իրեւ ուսկ իրողութիւն  
 և շատ հետամուտ ըբ լինենք գորա իրաւասութեան խորհուրդի  
 ու ծագման մասին Մեզ առելի պէտք է հետաքրքրէ այն հարցը  
 թէ ի՞նչ արդիւնքներ է առաջացնում այդ ազգեցութիւնը ի՞նչ  
 օգուտ ունինք գորանից բարիք թէ չորեկ հարկաւոր չէ այդ  
 իրողութեան հետեանքները շատ հետու իմսութել եթէ յիշենք նշն  
 իսկ մամուլի կարծիքը իրաւասուն Ընթերցողը չի մնուացել այն  
 սիրաւալի ընդունելութիւնը որով մեր տարածուած լրադիրներից  
 մէկը թիվլիսում նասուցչական ֆուլով կայանալուց մի քիչ առաջ  
 բարեկց ու պատուեց այդ ժողովու նա ո՛չ տարաւ ո՛չ բերեց այլ  
 պարզ բացայաց հրատակեց թէ լուսաւորութիւն տարածողը  
 պարբերական մա մուլն է և ոչ ուսումնարանը Անշուշտ այն  
 ժամանակ ընթերցողները ինքեանք արժանան որ կերպով կատեցին  
 այս խօսքի ծայրացեղութիւնը դուցէ նորա միւս պաշտօնակիցներն  
 ել ծանր զգացին իրանց վերայաց անդանելի բեռի մեծութիւնը  
 որովհետեւ այժմ արգեն առած է գարձել թէ լուսաւորութիւնը  
 չի տարածուած մի մի այն մամուլի կամ մի մի այն ուսումնա  
 րանի միշնորդութեամբ և թէ ընդհակառակ գորա մի կաթիւ  
 ներ և ուրիշ մեծ ծովացած կօրութիւնների մէջ լրաց և մի և  
 նոյն ժամանակ եթէ այդ կաթիւները միաբան գործելու համար միա  
 նան իւրաքանչիւրին մեծ պատուաւոր մաս կը մնայ իւրօվսունը  
 կատարելու համար և եթէ այժմ պիտի ցցց տանք մունք լի ա  
 ցաւական ազգեցութիւնը մեր մատաղ սերնդի վերայ մի  
 միաքը այն չէ որ բոլորովին արդարացնենք ուսումնարանին որ  
 որ նշնպէս իւր բացասական բարեմասութիւններ ունի այդ ընդ  
 հանուր գործի մէջ այլ որ առանց նանիր ինքնախաբութեան հա  
 մարձակ մերձենանք այն թափուր մնացած հանդիսին ուր որ միա-

բան գործելու կապերը բաւական քաքտուած են երկում. յուսաւ լով որ ներհակ կողմէ էլ պատշաճ լրջութեամբ կը վերաբերի այս ծանր խնդրին:

Երբ որ առաջին անգամ նկատում էինք վերը յիշած իրզութիւնը, երբ որ աշակերտների մէջ խոր արմատացած էինք զըսնում լրացիրներով լուսաւորուելու ձգումը, մեզ միշտ այնպէս էր թուում: թէ այս անբնական երկութիւն մէջ ինքը ուսումնարանը շատ մեղաւոր պիտի լինի. երկեւ ասում էինք, ուսումնարանը չի լրացնում պատանիների ուսման փափազը, որ սոքա ուրիշ աղբերի են դիմումն Լրակի'ր և աշակե'րոտ, ի՞նչ առընչութիւն կայ սոցա մէջ: թէ և խելօք մարդիկ վաղուց քարոզել են, թէ Դպրոցը պէտք է մերձեցնել Կեանքին: բայց գժուար չէ հասկանալ թէ նոցա ասածների իրասուր այն չէր կարող լինել: իբր թէ մարմնով ու հոգով աճող պատանին արդէն պառաւի ցուզը ձեռին և ակնոց ները քթին պիտի շրջէ այն կեանքի մէջ որ գեռ ևս նորանը չէ: նոքա, որ այն քարոզները կարգացն բնաւ չէին մոռանում: թէ Դպրոցը էլ գարոց պիտի մնայ և կեանքը - կեանք: Եւ երաւ թէնչ նմանութիւն կայ: մի կողմից կեանքի բազմազարքը հոգսների, օրական պարուստի, անձնազրհութեամբ ընտանեաց լուծը տանելու, գոյութեան կուսի պիտանութեամբ ընկերութեան մասնակցելու, քաղաքակրթութեան, յառաջադիմութեան: և հասակաւոր մարդու յժերից բարեկայ այլ ձգուումների մէջ, և միւս կողմից գպրոցի: օրական 4 կամ 5 գամի մէջ, ուր աշակերտները մի քանի տարուայ մէջ պէտք է սովորեն երախտապարտ սրտով և իւրեանց աճիւնական զօրութիւններով ձեռք բերել: յարգել և մարդավայել կերպով վայելել այն ամենայն արտ ագրութիւնները: ինչ որ կեանքը շատ դաբերի ընթացքում խնամով հաւաքել է և ժառանք պել է նոր սերնդին: միակ այն յուսով, թէ սա ել ժամանակով արժանաւոր ժառանգ և քաղաքակրթութեան շարունակիչ նոր զօրութիւն կը դառնայ: թէ և գպրոցն էլ ունի իւր ցաւերը, վշտերը անյաջորդութիւնները, մատազ սրտերը զբաղեցնող գործերն բայց սոքա այն արտասուրների են նմանում: որոնք շատ շուտ հօվացնում և թեթևացնում են մի պահ առաջ սրտի փոքրիկ փղձուկը: սոքա այն բարերեր անձրէ են, որից յետոյ իսկայն զուարթ արեգակ է փայլում: Իսկ կեանքի արտասուրը դառն եւնա արիւն է շատ անգամ: կեանքի անձրէը երբեմն կրակի արափ է, կեանքը ամենայն կողմից ըջապատռած է խորիորանիրով ու հրաբուխներով, որոնց չետ որ մարդքաջ ծանօթ պէտք է լինի: Հաւատացնում են, թէ մարդու համար քաղցը է այսպիսի բազմավտանդ կեանքը բայց ե՞րբ, որ քաջ պատրաստ է վտանգներին գեմինալու: Ահա գպրոցը այս կէտում և այսպէս պէտք է մօտենայ:

կեանքին, ահա այս է ոռաշօլա, առաջածի իսկական իմաստը. դպրոցը կամուրջ պիտի լինի կեանքի լնդարձակ ասպարէզ մտնելու համար, նա ընդհանուր հիմք, պէտք է տայ յետոյ այն ասպարիզի մէջ միշտ առ առ տեղ վայելչապէս բռնել տալու համար։ Թպրոցում—զգացումն աղատ, աչքերը, դէպի վեր ապագայի գաղափար, ուրախ վարժութեան մրցութիւն։ կեանքի մէջ—Ճնշուած, աչքերը դէպի վայր, ներկայի իրականութիւն, ու դպրոց հաստատ պահելու համար տենդային գործնութիւն։ Մի խօսքով ինչ կէտից որ նայենք, դպրոցը կեանք չէ, պատահին հասունացած չէ, մէկի համար գիրքն ու տեսրակն է, միւսի համար—լրագիրը։

Սուրը երեխայի ձեռին, լրագիրը աշակերտի ձեռին—երկու դէպումն էլ օգտաւէտ գործիքց միայն վտանգ պիտի առաջանայ, Այս վտանգը մեր մէջ աւելի պիտի լինի, որովհետեւ Հայ աշակերտը կրկնապատճիկ եղանակով իւր ձեռն է առել լրագիրը, նաև կարդում է յրագիր և զրում է մէջը, նա իւր լնկերոջ գրածը ծաղրում է, իւր գրածը Պիւթիայի պատգամից պահան չի գասում, եթէ մի հայեացք ձգենք, թէ առ հասարակ մեր լրագիրն ները ինչ տեսակ մտաւոր ոնուն գ են մատակարարում իւրեանց ընթերցողների մի մեծ մասին, այսինքն աշակերտներին, մենք կը տեսնենք, թէ այն վտանգը էլ աւելի բարդվաւմ է։

Բայց, որովհետեւ մեր լրագիրները ամենաբարի զիտաւորութիւններով են, զետեղում իւրեանց էջերում յօգուածները և նոցա նպատակը ընթերցողների լուսաւորութիւնն է, առ այժմ ոչ մի կողմից նոցա թերի չը համարենք և ենթագրենք, թէ մեր լրագիրները շատ գոհացուցիչ են, Հետաքրքրական է տեսնել թէ նաև այն դէպումն եթէ նոքա այդպէս գոհացուցիչ լինէին և նոցա կարգացողները լինէին ոչ միայն հասակաւորները, ինչ պէս որ հայերին մէջ մի սիրալ թիւ ըիմացութեամբ իրօք սորութիւն է դարձած՝ նաև այն դէպումն հարցնում ենք, ինչ պիտի լինէին հիտեանքը, եթէ ընթերցողը կարծէ, թէ այս դէպում բացի բարիք ուրիշ բան չի կարող առաջանալ շատ կը սիսալուի, և այս բանի մէջ դուռար չէ համոզւել մի մեծ հեղինակի սիրուն օրինակով, «Բնենենք, ասում է Բենը, հետեւեալ երկտողը և տեսնենք, թէ դա ինչ տպաւորութիւն է թողնում մատաղ սրտի վերայ։

Թող ներշնչուիմ։ Անկախութիւն, հզօր ոգւսպի։

Եռիւծ սրտի ւարծուի ական Տէր և Իշխան։

Այս խօսքերը անշոշտ քաղցր պէտք է չնչեն յուղախնդիր չարաձի պատահու ականջին, որովհետեւ իսկ և իսկ նորա եսական զգացումները շշափվում են՝ երբ որ ակնարկ է լինում մի տէր

իշխանի հզօր ոգւով ներշնչուելու մասին; Բայց թէ ովկէ այդ իշխանը կամ թէ ի՞նչ է տիրում նա—ի՞նչ փոյթ յուզուած պատանուն. նա անտարբեր է «Անկախութեան» նշանակութեան համար, մինչև անգամ նորա ուշադրութիւնը չի գրգռվում՝ «առիջի սիրու և «արծուի աչք» բառերով: Այնպէս որ պատանու երեակայութիւնը նուազ չափով չի բորբոքուի, եթէ նոյն տողերը հնչեին այսպէս.

Թող ներշնչուիմ, ջանմքո—Մումքո, հզօր ոգւովդու:

Թմբլջոջու, Մոլամկան Տէր և Իշխան, Սիոնքու բանաստեղծութեան երեք քառորդը յիշողութեան մէջ կը տպաւորուի իբրև սոսկ բառեր, և միայն մի քառորդի իմաստի համեմատ: Առ հասարակ իմաստի համար բաւական է հասկացողութեան ամենաթոյլ թելը՝ միայն թէ այդ թէի մէջ խճառուին ու կապուին մեկ հրապուրութ զգացումները: Այս օրինակով բացատրվում է մի ոքը աշակերտների մտաւոր վիճակը, բայց ակնարկած օրէնքը աւելի ընդարձակ գործադրութիւն ունի: Օտելլոն, որ մեծ էր շատ մեծամեծ գործերում, այսինքն թէ հանձարեղ մտքով և թէ վսեմ սրտով, թշուառութեան զահ զնաց մի նագօի ձարսիկութեամբ որ կարողացաւ նորա կրքերը խաղացնել իւր ուղեցածի պէս: Նորա միտքը պղտորուեցաւ եագօի հաշուած բառերից:

Գալով մեր ինքրին, յոյս ունիքը, ընթերցողը չի վարանի մեղ հետ պնդելու, թէ աշակերտները մեր մամուլի կարգացածից երեք քառորդը կը մը սոսկ բասեր: Բայց որովհետեւ իւրաքանչեւր մարդու ըմբռնողական կարողութիւնը մի սահման ու չափ ունի, ապա ուրեմն որքան նորա մէջ սաստկանայ բառասիրութիւնը՝ պինչափ պէտքէ նուազի նորա մէջ իմաստասիրութիւնը, պատեղ կատարեալ կերպով տիրում է խոտորնակ համեմատութեան օրէնք: — Բայց մենք գլխաւորը չը պիտի մոռանիք, մենք պէտք տիսունենք և այն, թէ մեր լրագիրները աշակերտի զբաղիսի հրապօւութեան գդացումներ են զարթեցնում:

Յատկապէս խնդրում ենք ընթերցողից ի նկատի ունենալ թէ լրացրի թերութիւնները նկարագրելով՝ մենք բնաւ մտադիր չենք արդարացնել մեղ վարժապետներիս, Մանաւանդ որ մեր բան ինարանը լրացրի մասին խօսելը չէ, մենք նկարագրում ենք մեր ուսումնարանի ցաւը, որի ծայրը մասամբ հասնում է լրացրին: Թէև ուսումնարանը շատ հանդամակներ ունի, բայց նորա չեն հրատարակուած, նոցա մասին խօսելը մեծամեծ ակյարմարութիւններ ունի որովհետեւ նորա յայտնի են միայն մեջ վարժապետներիս: մեր նեղ փորձերով նթէ այնպիսի հանգամանքների մասին խօսենք այն ժամանակ մենք կը դառնանք դատաւոր մեր անձի վերայ: Զոր

օր. քանի՞ տարի է որ թեմական վերատեսչութիւն է հաստատուած, բայց ո՞ր թեմկ. Վերատեսուչը բարեհաճեց իւր հարուստ տեղեկութիւնները հրապարակ հանել որպէս զի մեր ուսումնարանների մասին գաղափար կազմելու համար նիւթ ունենայինք: Եթէ այսպէս աղքատ ենք ուրիշ նիւթերով՝ լրագիրները յայտնի իրողութիւններ են, նոքա մեր առաջ շուարած են, ուստի ամենայն ընթերցող կարող է ստուգել նոցա մասին ասածը: Եւ եթէ այն էլ յիշենք, թէ լրագիրների մէջ աշխատողները բաւական մասով նոյն իսկ ուսուցիչներն են, ինչպէս որ այս հրապարակաւ խոստովանեցին մեր խմբագիրները Ուսուցչական ժողովում այն ժամանակ աւելի վրատահամբ պիտի խօսենք մեր նիւթի մասին, որովհետև մեր խօսքը աւելի մեր պաշտօնակիցներին գիմած կը լինի: —

«Լուսաւորութիւն տարածողը մամուլն է և ոչ ուսումնարանը: այս խօսքը միայն իւր սրտապանծ վճռով զարմանալի չէ, որը որ մենք էլ չենք կրկնում այն մտքով, որ դորա անհեղեղութիւնը ապացուցանենք: Այդ խօսքով ինքը մամուլը ամենաձիշտ և սիրուն կերպով նկարագրում է իւր սեպհական պատկերը: Անհաշիւ թողնելով երբեմասկի բացառութիւնները՝ մեծ մասով մամուլը այդպէս ինքնահաճ բանակալ է հանդիսանում մեր գլխին, որ առ ոչինչ է սեպում ընթերցողի առողջ գատողութիւնը և մը տածելու իրաւունքը. այն ժամանակ մամուլը չի ճանաչում ոչինչ սահման, վայելչութիւն, արդարութիւն, պարկեշտութիւն. Նորա համար օրէնք չը կայ, ինքն է օրէնք սահմանողը: Նորա ինքնահնար վճիռները չուրանալու շմարտութիւններ են. տաղանդը ուսումնական գիտութիւն, առաքինութիւն, արժանիք — ամենայն բան ուսակոխ կ'անէ, եթէ.... իւր «համբարից» չէ: Ամենայն բան ոչինչ միայն մամուլն է ինչ այնպէս էլ իւրաքանչիւր լրագրի համար միւսները ոչինչ են՝ միայն ինքն է իսկական մամուլ լրագրութեան մէջ էլ իմբագիրն է ամենայն ինչ իսկ աշխատակիցները հլու ծառաներ՝ մինչեւ որ «համբարումն» են, իսկ այսուհետև ամէնքն էլ առաջին կարգի անընդունակութիւններ են. Մամուլը չի վարանի հօմերական ծիծաղով ծաղըել ամենայն սրբութիւն և արձան կանգնեցնել վատութեան: Աւելացն ենք և այն, թէ ինչպէս մի լրագրի ասածը բոլորովին հակառակով է ներկում միւսը, թէ ինչ պէս այս օր մինը հուր ու սրով հալածում է այն, ինչի համար որ երեկ խաչվում էր, թէ ինչպէս բանակուիւր միշտ երկուսի մահու և կեանքի մենամարտութիւն է՝ ուր երրորդը սառն, գուցե և նենդ կերպով, նպյում է, որ նոքա երկու սն էլ իրար տալով ջարդուին: Այն գաղափարը, յարմարութիւնը, պատիւը, որ իւր անձի համար մէկը պաշտպանում է, մերժելի է քարողում ուրիշ համար. պատուածանաչ զայրոյթ է թափում: բայց միայն իւր հա-

մար, հարուածել ևս գիտէ, բայց միայն ուրիշին։ Խղճի աղատութիւն կը քարողէ, ոչ ոքին չի թողնի օր խղճի ազատութեամբ խօսէ։ աղջասիրութիւն կը դաւանէ, բայց այդպիսի գործ քանգելու ևս ընդունակ է։ յանում գիտութեան կը խօսէ, կը ծուլանայ գիտութեան առաջին երեսը կարգալու։ բժախնդիր է, եղելութիւնները գիտմամբ խառնաշփոթումէ, թշնամու սիրով գաղափարից ուրանում է, և այս ամենը ծածկում է ձարձատող խօսքերի ամենամեծ պաշարով։ Կարճ՝ տղիտութեան, անձնամոլութեան, առերկոյթ մաքրութեան աշխարհ է ներկայացնում մասուլը։ —Եւ այս ամենը կարգում է Հայ աշակերտը ամենամեծ զուարձութեամբ։

Անհաւատալի է, թէ երբեմն որքան բարձր է այս զուարձութեան աստիճանը։ Մի աշակերտ, որի մայրը օրական հացի կարօտ էր, չը խնայեց և բաժանորդագրուեցաւ լրազրին, ամենայն օր գասեր պատրաստելուց յետոյ՝ սկսեց լրագիրը երկուերեք անգամ կարգալ ծայրէ ի ծայր՝ այսինքն լրազրի անունից, տար եթուից (շեշտում ենք տարին), պայմաններից սկսած, մինչև բոլոր յայտարարութիւնները, զրաքնիչից հրամանը, տպարանի և խմբագրի անունը, խեղճի ամենայն օրը վերջանում էր աչքի արիւնլուայ ուռուցքով։ Եւ ասում են, թէ նորա ուղեղը այլքան բռնի աշխատութիւններից արգեն ցնցուել է։ Նա ուրախ էր, երբ որ լրագրից սովորում էր՝ «բեզիստր» բառը, որ նորա թարգմանութեամբ նշանիկում էր՝ «քաղցր ձայն»։ այսպիսի անլուր բառերին միշտ իւրաշնար թարգմանութիւնն էր կցում, որոնցից յետոյ էլ չէր ազատվում։ Նա զարմանում էր, որ իւր սիրած վարժապետի մասին հայհոյանքներ են գրում, բայց իսկոյն վարժվում էր այն տաքտաք բառերով և միւս օր պառաւ մեծ մօրը յանդիմանելով ասում էր՝ «ա՞ն, գու իդիօտ, հացկատակ, մոլեռանդ, կղերական»։ —2ենք կարծում թէ լրագիրը իրան պատիւ պէտք է համարէ, որ իւր գաղափարները այսպէս է տարածվում կուսական անմշակ հողերում։ մանաւանդ որ միևնույն աշակերտը ճիշտ այդ ոգեւորութեամբ կարդումէ և միւս լրագիրները։ Եւ իրօք շատ աշակերտներ արգեն բաժանուած են կուսակցութիւնների, ոմանք՝ «մշակական», և ոմանք՝ «մեղուական»։ Են, բայց այս արգելքէ, որ փոստը եկածի պէս՝ միանգամբց կարդան 4 «Մշակ», 2 «Մեղու», 4 «Նոր-Դար», և 1 «Երձագանք», այսինքն 11 տպագրական թերթ.... որ հանաք բան չէ Եւրոպայում ամենակրթուած հասակաւորն անգամ բացի ընտրած մի թերթի ուրիշ բան չի կարգում։ միայն մեր լրագիրները կարողացել են Հայ աշակերտին ուրիշ ճաշակներ պատուաստել։

Մեզ համար ցաւ ե, որ մեր մամուլը այսպիսի գոյներով պիտի նկարագրուի։ մենք չեն զարմանայ, եթէ մեզ մեղազրեն, թէ անարդար ենք եղել Որովհետեւ միթէ քիչ ենք կարգում և

այնպիսի յօդուածներ, որոնց մէջ պարզ ցոլանում է ամենազնիւ ձգուում. և դիտաւորութիւն հասարակաց օգտին ծառայելու համար: Նոցա ձգտումն ու դիտաւորութիւնը այդ գեղքերում ոչ ոք չը պիտի ուրանաց: Բայց երբ որ նոքա ամենայն լրջութեամբ ձգնում են մի գաղափար քարոզել իրանց ընթերցողներին, ինչից է պատահում: որ ընթերցողների բերանում մեծ մասով բառեր են մնում: Մենք տեսանք, թէ սորա պատճառն այն է, որ լրագրի «անկախութիւն», «առիւծի սիրա», «արծուի ազք» գաղափարները ընթերցողի համար այնքան նշանակութիւն ունին, ինչքան և «զումբոմումբօց», «թմրլաջոջի», «մալամուկն» անմիտ ձայները: Այժմպէտք է աւելացնենք, թէ ընթերցողը առանց վարձատրութեան չի մնում: որ այդպիսի անհմաստ բառեր կարդալու տհաճութիւն է ունենում: նա գոչ և երախտապարա է, որ իւր ախորժակները մի անգամ էլ ըորը ոք ունեց ան: Մենք հաւատում ենք, թէ լրագիրը շատ անգամ այս սխալը ակամայ է գործում (էլ չենք յիշում զիտաւորութեամբ գործուածները որոնց թիւը նոյնպէս քիչ չէ): Սխալը այն է, որ լրագիրը անշորհք կերպով է վարուում իւր քարոզած բնարանի հետ: Ասենք նա ուզում է մի գաղափար տարածել: այդ գաղափարին նա մօտենում է ներքեց—ցածից, իսկոյն մի անձնաւորութիւն է ընտրում և նորա գլխին կակալներ է կոտրում: որպէս զի այդ գաղափարի ստուգութիւնը նորա գլխի պնդութեան վերայ փորձէ Եւ վերջը ի՞նչ է լինում ահա գաղափարը թոշած: մարդ մարդուն է հանդիպում իւր այնեայն կըքերով, մանր հաշիւերով: անցեալ անհիմ թշնամութիւններով: ներկայ ապօրինի պահանջներով: և այլն.... մինչեւ որ ցեխի տակ ոչ մէկ գաղափար մաքուր չի մնում: Այսպիսի գրուածքների կարգաւուշակերտի համար անպատճութիւն պիտի լինի: բայց չէ, նա կարդում է առանց զզուանքի: Յայտնի է, թէ մեր մանուկները քանի քանի տոքեղ զարգերով են մտնում ուսումնարան իւրեանց ընտանեկան կրթութեան շնորհքով: յայտնի է նմանապէս: թէ որքան զանքեր է գործում ուսումնարանը այն արատներին սնունդ չը տալու: համար, ուր երբեմն կարծես անպսակ չի մնում նորա աշխատաւութիւնը: Բայց սխալ է: ահա լրագրի մի յօդուած կարողանում է նորից արծարծել թշշւառի մէջ հին արմատների բողբոշները, Զանէք, թէ ուսումնարանը թշիլ է, այլ ասացէք: թէ գժիախտարար մարգկային բնութիւնը այդպէս է: Աէրպենտերը մի պարզ օրինակով նկարագրում է բնութեան այդ հաստատութիւնը: «Հետեւեալ դեպքը՝ ցցց է տալիս, ասում է նա: թէ մեր մաքերի արտայ այս տութեան զան ակի վերայ որ աստիճան աղգում է հին սովորութիւնը, և թէ այդ սովորութիւնը մոռանալու յետոյ ինչպէս նորոգվում է նոյնը, եթէ կրկնուին այն հանգա-

մանքները, որոնց ազգեցութեամբ որ սկզբնապէս նա դոյացել էր։ Մի սպայ, որ չարաշար ծառայել էր այնպիսի շրջանի մէջ, ուր գրեթե բնաւ մի հրաման չէր արտասանվում առանց յիշոցների, և որ նմանապէս վարժուել էր անդադար յիշոցաբանելու, երբ որ մասնաւոր կեանքը վերադարձաւ, ինքն իրան ուխտեց՝ չը ինայել ոչինչ հնարք, որ մոռանայ այդ գէշ սովորութիւնը, թէ իւր զգաստական ջանքերով և թէ իւր մտերիմների աղերսանկներով վերջապէս այդ մարդը բոլորովին բուժուեցաւ, Սակայն շատ տարիներ անցնելուց յետոյ՝ գարձեալ կոչեցին նորան զինուորական ծառայութեան մէջ, ուր որ կրկին սկսեց առաջուայ անքաղաքավարի խօսքերի գործածութիւնը։ Բայց երբ որ բարեկամներից մէկը ցաւելով նկատեց նորան, թէ ինչ կարիք կար հին սովորութիւնը վերանորոգելու, նա ամենայն անկեղծութեամբ հաւատացրեց, թէ բնաւ չի յիշում և չի գիտակցում այն հայ ոյ ուժեանց արտասանութիւնը։ Այս օրինակը բացատրութեան կարօտ չէ, որ աւելացնենք, թէ ինչպէս աշակերտները լրագրի ընթերցանութեամբ կրկին սովորում են հայուսանկներ, ապերախտութիւն, անարդութիւն, մեծամտութիւն, լրբութիւն, կոռուպարութիւն և ուրիշ մանկական մոլութիւններ, և թէ ինչպէս թուլանում է գպրոցը, երբ որ մամուլը նորան նեցուկ լինելու փախանակ։ որ իւր սեպուհ պարտականութիւնն էր, հակառակութեամբ է ազգում։

Գիտենք, որ սմանք թուլանալը անզօրութիւն պիտի համարին, բայց այն ժամանակ նոքա երեխ կ'ուղենան, որ գպրոցը պատերազմ յայտնէ մամուլին, իսկ մենք ժամանակի ամենաթշուառ նշան պիտի համարենք, եթէ որ և իցէ կողմից այդ զարհութելի գաղափարի նշյլը նկատենք, Քյորը քրոջ գէմ ձեռք չի բարձրացնի, և կը թուլանայ, եթէ նեղուի հարազատից։ Մամուլը գպրոց և հոգեորականութիւն—իրար պատերազմ չը պիտի յայտնին, ապա թէ ոչ ամենքը կը թուլանան և ոչ մէկը չի օդտուի։ Հին Ճշմարտութիւն է, բայց նոքա գեռ շատ հեռու են, որ սկսեն զիտակցարար իրար օգնել, գաշնակից համարել և մրցել միմիայն այն ձգտմամբ, որ իւրաքանչիւը ժամանակի պահանջումներից յետ չը մնայ։ Մի խլբառում որեկից կողմից, մի անդոդյշ քայլ կամաւ, թէ ակամայ գործած, շատ թանկ է նստում։ Անզգուշութեամբ սերմանած գաղափարը ծածուկ անցքերով տարածվում և զրաւում է մտքերն եւ, արտերը, ամուր հաստատվում է խոր բնի մէջ և ոյն տեղից ամենայն բռնակալութեամբ իշխում է ամբողջ բարոյական աշխարհքի վերայ, սորիկացնում ճնշումն և ցամաքեցնումէ միւս ամենայն առողջ բողբոջները, եթէ և սոքա երեան, Մենք գաղափար չունինք, թէ ինչպէս կոծում և մաշում է մարդու ներսը,

թէ ինչպէս ջլատումէ նորա սեպհական կամքն ու միմնացնում է զիտակցութիւնը, երբ որ այն տեղ մի անգամ բռւն է գնում այս կամ այն միտքը հակառակ առողջագատութեան և խնամած կը թութեան: Ինչպէս որ աննկատ կաթիլը որձաքար է ծակում այնպէս էլ անյայտ ծագմամբ սերմանած «իշխող գաղափարը» բարյական աւերակներ է տարածում: Ոչ միայն անհատներ, այլ և ամբողջ հասարակութիւններ և ամբոխացած բաղմութիւններ «իշխող գաղափարի» լծի տակ այնպիսի անմտութիւններ են առաջացնում: որ մարդ սկսում է յուսահատուիլ մորդկային բանականութեան անզօրութիւնից:

Պատմութիւնը շատ օրինակներ ունի արձանագրած, որոնք խոշոր կերպով ցոյց են տալիս այն, ինչ որ ամենայն օր կատարվում է մեր շուրջ, միայն թէ աննկատ կերպով: Աերջին յիշած հեղինակը հաղորդում է: «1374 թուին Ասմէնի մեջ կը տեսնէ, ինք Գերմանիայից ժողոված արանց և կանանց ամբոխներ, որոնք մի սնապաշտ մոլորութեան ազգեցութեամբ խմբուելով՝ ժողովրդ գեան առաջեւ փողոցներում և ժամանակներում կատարում էին հետևեալներկայացում: Ճեսք ճեռքին տալով շրջաններ էին կազմում: և իւրեանց զգացումների ազդը կարծես բոլորովին կորցնելով և ամեննեին ուշազրութիւն չը դարձնելով ներկայ հանդիսականների վերայ ամրոջ ժամերի ընթացքում կաքաւում էին կատարի յափշտակութեամբ, մինչեւ որ կատարեալ անդայութեան մէջ զետնի վերայ փոփում էին: Այն ժամանակ նոքա իրանց անհասկանալի վշտակրութիւնն էին գանդատում և հոգեւարքի մէջ տնքում էին մինչեւ որ կտաւի մէջ չը փաթաթէին նոցա: և մէջքը չը գոտապենդէին, այսպէս հաղիւ ուշքի էին գալիս և էլ չէին գանդատփում քանի որ ախտի կրկնութիւնը չէր սկսվում: Փաթաթվում էին այն պատճառով, որ կատաղութիւնից յետոյ նոցա փորերը ուռած զըմբեթանում էին: ուր հանդիսականները երբեմն այդ եղկելիներին աւելի շուտ թեթևութիւն տալու համար անարօւեստ հնար էին դործ զնում: սկսում էին իսկոյն ոտքերով կղճորել և ցաւած տեղերը ծեծել: նոքա կագաւելու ժամանակ ոչինչ չէին տեսնում և լսում: կարծեն նոցա բոլոր զգայարանքները փակվում էին: բայց նոցա հալածում էին անուշներ, առեղծուածներ, երեւակայութեան մէջ մտնում էին գեեր, որոնց անունները նոքա աղաղակում էին: յետոյ հաւատացնում էին: թէ արեան հեղեղների մէջ էին հեղձվում ուստի և ստիպուած ցաթկտում էին: Ամանք էլ երկինը բացուած էին տեսնում սքանչելի հրապոյրներով:

Այս հիւանդական կաքաւը մի քանի ամսից յետոյ անցաւ Կոլոն, ուր որ ախտակիրների թիւը հասաւ 5000-ի: ապա և Մեց քաղաքը որի փողոցները հաղարաւոր կաքաւողներով լցուեցան:

Երկրագործը, իւր գութանն էր թողնում, աշխատաւորը—իւր արչեստանցը, տանտիկինը—լնտանեկան զբաղումները, որպէս զի ամէնքը այն դժոխային հարսանիքին մասնակցեն, իսկ ծաղկեալ վաճարաշահ քաղաքը այս մեծահանգէս անկարգութիւններից, կործանութեան ասպարէղ դարձաւ . . .

Եթէ աղքատ են առողջ գործողութեան ազքիւրները՝ այն ժամանակ մի գաղափարի բոնակալ աղղեցութեամբ մտքի խուարումը աւելի ծայրացելութեան է հասնում. ինչպէս որ այս երկու օրինակներից տեսնում ենք.

Քրանսիայի ընդարձակ վանքի մի կոյս սկսեց կատուի պէս մլաւել Ըատ Հանցաւ միւս քոյրերն էլ մլաւեցին. Վերջապէս ամրող երգեցիկ խումբը ամենայն օր հաւաքվում էր ճիշտ որոշած ժամին կատուի երաժշտութիւնը երկար ու ձիգ նուագելու համար. Այս հանգէսներին վերջ տրուեցաւ, երբ որ կոյսերը լսեցին, թէ ոստիկանութեան հրամանով վանքի գոների առաջ պատրաստ հսկում է զինուորների մի վաշտ խարազանները ձեռին, այն ևս նոցա համար, որոնք խօսք չեն տայ, թէ մլաւումը իսպառ, կը թողնեն:

Փե. զարում Գերմանական վանքի մի կոյս սկսեց միւս քոյրերին կծոտել Միւս քոյրերը յետ չը մացին նօյն հակում ստացան. Այս ախտի լուրը պտտեց մի վանքից միւս վանքը, և ամենայն տեղ նմանողներ բաղմացան, մինչև որ կծելու ախտը Գերմ. կուսանաց վանքերում ընդհանրացաւ, որ և յետոյ անցաւ Հոլլանդայի վանքերում և հասաւ մինչև հոռվմ:

Այս պայծառ օրինակներից տեսնում ենք, թէ ինչ զարմանալի հակում կայ մարդու մէջ նման ելու համար, եթէ մտքի մէջ խոր նստած մէնը զարկվում է:

Այժմ յիշենք վերջին տարիների մանր ու խոշոր դեպքերը, որոնցով որ մեր դպրոցները հաշակուել են, և հարցնենք. թէ մի՞թէ սոքա չեն ապացուցանում, որ մեր մընոլորտում արգեն դպրոցական ախտ է սկսուել, որ սպառնում է իւր գագաթնակետին հասնելու. Արդեօք կարելի չէ նորան վերջ տալ, այնպէս որ աշակերտը սկսէ, մեր աշուղի ասածին պէս, զիր սիրել զալամ սիրել, Աստուած սիրել որ լեռնական գառնաշունչ քամիներին կապէլը իրան փառք չը համարէ, որ իւր միտքը չը զբաղեցնէ այն բանով, ինչ որ նորա հետաքրքրութիւններից գուրս պիտի լինի, և որ դիմէ այն առողջ աղբեւրներին, որոնք բաց են նորա պատանեկան գործողութեանց համար. Մեր բոլոր ասածներից պարզ պիտի լինի, թէ այդ հնարներից մէկը պիտի լինի մամուլի և դպրոցի միահամուռ աղղեցութիւնը. Թէ այսպիսի համերաշխութիւնը լինէ Զօրութիւն է և թէ արդէն իւր սկզբնաւորութեան

նշանները ցոյց է տալիս՝ մի անհերքելի ապացոյց կայ: Ազգային սրտի բարախոման մէջ կան բողէներ, երբ որ ամենայն ներքին թղթ նամաւթիւն, վէճ կագ և կրիւ դադարում են, և ամենքը ինչպէս մի սիրտ զգում են իրանց ընդհանուր աղետը: Արդեօք ի՞նչ շարժա ոփթմներով ա մրո ղջ մամուլը այնպէս զսպած կերպով վերաբերեց ձեմարանի ցաւալի գէտպին, այս մեզ համար գուցէ առ միշտ գաղտնիք մնայ: բայց մի՞թէ կարիք կայ այդ գաղտնիքը իմանալու: Անշուշտ բաւական է, որ ինքը իրողութիւնը իւր համար խօսէ: Այս միջոցին այդ զգուշութիւնը մի պանծալի վիհագործութիւն էր, որով ձեմարանի շուտափոյթ խաղաղութիլը մեծ նպաստ ստացաւ: Զարհութելի գործը թեթևամտութեամբ ձեռնարկելով աշակերտները մեծ յոյս էին զրել թէ պէտք է ծափահարութիւն ստանան երկու մեծ ուժերի կողմից, որոնցից մէկը մամուլը պիտի լինէր: Բայց հակառակ՝ նոցա ակնկալութեան, ամենայն, կողմից սառն ընդունելութիւն եղաւ, որով ձեմարանի առաջ բացուած խրամատը իսկայն գակուեցաւ: Յուսանք, որ, այս առաջին և վերջին անգամ չ լինի, որ մամուլը այնպէս սխրալի մի արանութեամբ բարձր բարուակը կառկարեց գորոցին: Նա դորանով ոչինչ ըլ կորցրեց և զեռ էլի միշտ ժամանակ կը գտնէ յանցաւորին իւր բարոյական զօրութեամբ պատճելու ըստ արժանուցին: Բայց նաև և առաջ թող աշակերտը սովորէ մամուլը առաջ պատկառել և նորան իւր թեթևամտութեան խաղաղով չը չինել իւր սին յօյսերով! —

Ա, երջացնելով յօդուածը, մենք չենք կարող առաջարկել որ ուսումնարանի վարչութեան ուժով սրգելուի լրագրի ընթերցանութիւնը, արգելուած պտուղը ամենավատնպաւոր հիշող գաղափարներից մէկն է: Բայց և այնպէս այդ ընթերցանութիւնը անբնական ենք համարում: Խելք ճանապարհով որ այդ անբնական երկոյթը մուտք է զտել՝ մեր ուսումնարանում: նոյն ճանապարհով էլ նա պէտք է իւր սահմանների մէջ մտնէ: Քանի մամուլը սխալ ընթացք բռնէ, նա միշտ կը կարգացուի թերուներից տփշտներից: չը խմորուածներից, երբ որ նա լաւանայ նա իւր իսկական ընթերցողներին կը գրաւէ: Քանի մամուլը իւր յատուկ նոպատակին մեր ձենայ, այսինքն մեր կեանքի յատուկ շահերի ինքնապատկերը դառնայ: — այնքան աշակերտը ինքնին կը չափաւորէ լրագրի անյագ ընթերցանութիւնը, որովհետեւ իրական կեանքի ալէկոծութիւնները ոչ կը մըռնէ, ոչ էլ կ'ուղենայ անժամանակ ծերանալ: շատ է նորա համար իւր գաղափարական աշխարհի յուզումը, և երանի որ այսուեղ փառքով յաջողութիւն ունենայ: — Մամուլը կատարելագործութիւնը աշակերտը լրացնելու ընթերցողների թուի պակասման նշան համարելով, մենք բնաւ չենք մոռանում խնդրի երկրորդ երեսը: Մեր գրականութիւնը զրեթէ ամբողջապէս զետեղուելէ մի մի այն

պարբերական մամուլի մէջ Ուրիշ ազգերի մէջ ուր ուսանողութիւնը պարբերական օրական մամուլով չէ ուղում զբաղուել կայ մի պատուաւոր զբականութիւն, որ մատչելի և հետաքրքրական է ուսանողութեան համար: Այս տեսակէտից չափենք այս մէջ կորուստը, որով այս օր զուրկ ենք մնացել «Փորձի» պէս մի զբական հանդիսից: Այժմեան մամուլը ուրեմն հարկաւ երկու պաշտօն պիտի կատարէ՝ և օրական թերթ լինի և զբականական հանգէս: Արդեօք շատ ենք պատահում նորա մէջ՝ ուսանողութեան սնունդ տալու համար՝ ճշմարիտ վաեմականը, հանճարի ստեղծագործութիւնը, պատագութիւնը, առ հասարակ այն ամենպէս, ինչ որ հոգին զօրացնում է կազզուրում է: Մեր մամուլը կարծեն չկ զանազանում նոր ոյժը անմշակութից՝ ամենայն աշխարհու, թերուտի պարապութիւնից զրիշ բռնող անձն՝ պատուաւոր տեղ է բռնել, մամուլի մէջ: Մեր զբագետները բնաւ չեն, զգում իրանց ուժից բարձր ձեռնարկած զործի անյարմարութիւնները նորա պատրաստ են ամենայն բան զրել և խմբագիրը ընդունում է:

Մենք խնդրում ենք ինային աշակերտների սիրտը

Ս: ՄԱՆԴԻՆԵԱՆ

### ԱՆՀԱՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱԳՂԵՑՈՒԹԻՒՆԸ

ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՒԽՈՒՅԱՆ ՎԼԵՐԱՅ:

(Ֆրանց Ֆօն Վերդիի)

Մեր անմոռաց վարժապետ Պեստալոցցին ասում է, «Մանուկին պէտք է գննական կերպով ծանօթացնել շըջապատզ աշխարհի շատ բաների հետ, բնտելացնել նորան լեզուին տիրելու, նախ քան կարդալ-զրելն ուսուցանելը»: Ընդ նմին գիմելով գաստիարակներին, նա յարակցում է: «Առաւել ու առաւել ընդլայնեցն ձեզ յանձնուած մանուկների դիտողաբար ձեռն բերած տեղեկութեանց շըջանը»: Իւր «Abendstunden eines Einsiedlers» (Մէ հիայնակէց երեխէան ժամերը:) հեղինակութեան յառաջարանում Պեստալոցցին ամենալի տեսակ դաստիարակութեան սկզբնակէտ համարում է՝ սահիկների բարսոց ուսումնասիրութիւնը: Սորանով կարծես նա յանկա-

նում էր ասել, որ դաստիարակութեան գործին պիտի նախող գէր մանկան հոգեկան կեանքի, նորա անհատականութեան ծանօթութիւնը և ուսումնասիրութիւնը: Անհատականութեան ինչութիւնը որոշելը և նորա ազդեցութիւնը դաստիարակութեան և ուսուցման վերայ ապացուցանելն է: ահա՝ սոյն յօդուածի նպատակը:

Եւ մեր ժամանակ յաճախ լովում են ուսուցիչների գանգատները, թէ չը նայելով մինչև անգամ իրենց եռանգուն և անգուլ գործունէութեանը և իրենց պարտաւորութիւնները բարեխճաբար կատարելուն, այնու ամենայնիւ դաստիարակութիւնն և ուսուցումը: միշտ ցանկալի արդիւնքները չեն տալիս: Իսկ եթէ կը հարցնենք պատճուռը, մօտաւորապէս ալսպիսի պատասխան կը ստանանք: Մինը ձեզ կամէ: «Ո՞վ է կարող այնքան բազմաթիւ աշակերտների հետ պարապելով, զէթ առ նուազն բաւականութիւն տալ մանկավարժութեան պահանջներին»: Միւսը՝ «Բայց եթէ ինձ ազատէին բժամիտներից»: Երբորդը կը խօսի վարուց և բարուց ապականութեան մասին, որոնց գէմ նա սահմանադ է մաքառել: Զորբորդը գովում է քաղաքալին դպրոցները, յանդիման կացուցանելով նոյցա գիւղական դպրոցներին, ասելով՝ «Եթէ իմ խնամքին յանձնուած մանուկները ուրիշ շըջանից լինէին, այն ժամանակ իշարկէ, ես կարող էի գոնէ մի յաջող արդիւնքի հասնել: — Այսպէս դատում է գիւղական ուսուցիչը: — Իսկ քաղաքալին ծխական դպրոցների ուսուցիչները: — Նոքա էլ վկայում են իւրեանց ջանքերի առաւել կամ նուտղ անբաւականացուցիչ արդիւնքների մասին: Իսկ եթէ մեր ուշադրութիւնը բարձրագուն դպրոցների վերայ դարձնենք, որտեղ մեծ մասամբ այն պակասութիւններն ու անյարձմարութիւնները, որ ընդարձակ ասպարէզ են զտնում ծխական դպրոցներում, հեռացուած են, — մենք կը տեսնենք, որ այստեղ էլ մանկավարժական պահանջների կատարումը լիովին գոհացուցիչ չէ: Կասեմ աւելի. շատ անգամ լսում ենք զանգատներ մանկան մտքի սաստիկ գանդաղ զարգանալու մասին այնալիսի ուսուցիչներից, որոնք պարապում են փոքրաթիւ աշակերտների հետ, երբեմն էլ մինչև անգամ մէկի հետ:

Սորանից հետեւում է, որ մանկան խելքը այնպէս հեշտ չէ ձեակերպել, ինչպէս մեղքամոմը կամ կաւը. թէ անհատականութիւնը ահագին ազդեցութիւն ունի զարդացման վերալ. որնա կամ նպաստում է նորան, կամ դանդաղացնում. թէ անհրաժեշտ է ընդունել ոչ միայն կրթութիւնը իւրացնելու հնարաւորութիւնը, այլև այն սահմանները, որոնցից գուրս կրթութեան գործումն անդամ անկարելի է անցնել: Այս հանդամանքում կարելի է յենուիլ հետեւեալ փաստերի վերալ: Ոչ մի աշակերտ իրականութեան մէջ այն չի դառնում, ինչ որ դաստիարակութիւնը ճգնում էր նորան դարձնել: Այս փորձը ամենայն օր կրկնվում է: Արթէ միայն ուշք դարձնել բանտերի և ուրիշ արգելանոցների վերալ, և տկամայ կը զարմանաս, որ այդքան մարդիկ շեղուել են իսկական ճանապարհից. ուշի ուշով թերթելով լրագիրները, կը տեսնես, որ և մեր ժամանակ շատերը, չը նայելով իրենց ստացած, ըստ երևութիւն, լաւ դաստիարակութեանը, շեղվում են ընդհանուր — մարդկային լուսաւորութեան նպատակից: Այս, 'իհարկէ, դեռապացուց չէ, թէ բոլոր այդ անձինք զուրկ են: զարդանալու ընդունակութիւնից, այս դիպուածում առաւել շատ մեղաւոր է դաստիարակութիւնը, եթէ նա պարունակում էր եւր մէջ հակասութիւններ, կամ նորա միջացները գոհացուցիչն, կամ դաստիարակների կամքը չունէր անհրաժեշտ կարեւոր տոկունութիւնը: Նատ դիպուածներում ուսուցչի անշնորհքութիւնը և անփորձութիւնը կրթութեան գործում, նորա մեթօդիկայից ունեցած խախուտ տեղեկութիւնն է պատճառը. լինում, որ աշակերտին չէ յաջողվում իւրացնել մինչև անդամ ամենապիշինը: Եւ այն ուսուցիչները, որոնք հաստատում են, թէ իլենց աշակերտներից մի քանիսը չեն կարողանում ձեռք բերել մի քանի առարկաներից ամենահասարական տեղեկութիւններ իբր թէ ընդունակութեանց բացակայութեան պատճառով, իրենք իրենց դատավճիռն են կարդում:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ մասամբ ուսուցիչների անհոգութիւնը, անշնորհքութիւնը և վատ կառավարութիւնն է զարդացման դանդաղ առաջ գնալու պատճառով. բայց չենք մեր-

ժիլ և այն հանգամանքը, որ հազար էլանդուշ հոգացողովթիւն  
 ունենան, ամենաճշգրիտ միջոցներ գործածեն, եռամս  
 գունաւա անվեչեր կտմք ցոյց տան, ընտիր նախազծած ծրա  
 զիրներ գործ դնեն, դաստիարակութեան գործում ամենամեծ  
 հմտութիւն և փորձառութիւն ունենան, հոգեբանական և  
 մեթօդիքական լստիր տեղի կութիւններ ձեւք քերեն, այսու  
 ամենայնիւ գարձեալ ցանկալի արդիւնքնեցին միշտ չեն հաս  
 նիլ. Ուրեմն պարզ է, որ զարգանալու ընդունակութիւնները  
 լինում են իրարից շատ տարբեր և այս պատճառաւ էլ  
 ինչքան նշանաւոր չը լինէր գատտիարակի հմտութիւնն ու  
 կամքը, մի աշակերտի հետ պարապելիս նա չի կարող մի որոշ  
 սահմանն անցնել, ինչ ջանքեր էլ որ նա չը գործ գնէր. այն  
 ինչ ուրիշի ունետ, ուժերի առաւել քիչ լարելով, մի և սոյն  
 դասաւանդութեամբ, նա հասնում է նշանաւոր արդիւնքների  
 Սյուդի գիտուածում մենք նկատում ենք և ուրիշ տարբերու-  
 թիւն. մի աշակերտ հասնում է իր նպատակին առաւել կամ  
 նուազ գիւղութեամբ, այն ինչ միւսը մեծ գիտաւարովթիւններով  
 միայն և եթե մերձենում է նպատակին, մինչեւ անդամ հէնց  
 նոյն աշակերտը մեծ յառաջադիմութիւն է անում մի առարկա-  
 լից, և գիտաւարութեամբ է լմբռնում միւս առարկան. Սպա-  
 նով մենք տեսնում ենք, որ մի մարդ աշխարհ է գալիս  
 զարդանալու ընդունակութեամբ, իսկ միւսը ամենեին այդ  
 ընդունակութիւնը չունի. Սորա ապացոյց կարող է լինել  
 և կետևեալը. Մենք բազմից տեսնում ենք, որ մասուկները  
 աճում էին դաստիարակութեան մի և սոյն պայմանների  
 տակ, բայց և այնպէս զարգանում էին միմեանցից շատ տարբեր.  
 առելի առաջ եմ գնում: միւսնոյն ծնողաց որդիքը, անդամ  
 երկուսը եակները, որին կրթվում էին ըոլորովին միատեսակ  
 պայմանների տակ և իսկապէս միատեսակ արդիւնքներ պէտք  
 էնտակին: այն ինչ իրոք այսպէս չէ մասնուկները լինում են  
 անբերը. Աետեաբար, այս զանազանութիւնը դաստիարա-  
 կութեան միատեսակ պայմանների արդիւնքը չէ, որոց ներքո  
 աճում էին մանուկները, այլ նա առաւել չուտ կախուած է  
 գործարանական անհամանարութիւնից, որին նպաստում է  
 լայտնի գործունէութիւն, որ և պայմանուորում է ընական

ընդունակութիւննելլու, անհատականաւ հակումները։ Մտաւոր շրջանի ալս ընդունին, յատկութիւնները և անուանվում են բնական, ընդունակութիւններ, կամ մի խօսքով անհափականութեան, որովհետեւ Անտուածի ինչպէս առում է Լոկը, հաղորդում է ամեն մարդկային հոգուն առանձին տիպար, որը չի կարող ոչ ոչնչանալ, ու չէ լուրիչ որ երեք բանով փոխարինուիլ։ Ապա լուսը ըստ մի անհափական նիշուն է իրադարձութեամբ և չնայեն։ առաջնայական նիշուն է ինչ ու ու նայած պատճեաց մարդի Բայց առաջ ընտածին առաւտն ձնայալութեամբ մդեռ պահանձաւ չի պարզվում անհատականութեան դարձափարը։ Նկատուած է, որ մարդոց վարուելու, զգալու, մտածելու և գործելու յայտնի եղանակը պահպանվում է անմիտին ամենամատադր հասակից մինչև կետանքի ամենախորին։ Տերութիւնները, քայլ և ընածին բարոյական յատկութիւնները ժամանակի ընթացքում առատել և առատաւ առատաւել նկատելի են գույնում և ծերութեան ժամանակի գօրանում են։ Եղայտնվում մեծ տղունութեամբ։ Այս երեսով արժանի է առանձին ուշադրութեան։ Մարդու իւր կեանքում փորձում է արեր վերացրած ենատարեր աղդեաց յութիւններ, համբերում աշխամենափրկիրական բաղդին, այս ամենը լիոդնում են նորա վերացրած ամառեսակատակ ըստաւորութիւններ։ Նորա աշխարհ հայեցողութիւնը, իսկ նորա հետ և նորա մաքերը, զգացումները, բաղանքները, նորա համեղմունքները և նորա կրթութիւնը շատ անդամ զօրեղ կերպով փոփոխվում են կեանքի քուռան հանդամտնքների աղդեցութեան տակ, այնպէս որ երթեմն դժուար է լինում հաւատալ, որ կան հոգու մշտական, ընածին առանձնատյապակութիւնները, իսկ նորա մի անհատունի առանձին, մի անհալ իրեն յատուկ մտածելու, ցանկանալու և գործելու եղանակը իւրիւն առաջնայական մտածելու մեջ կեանքի ամենա տարբեր հանդամտնքները։ Վայց փորձը ցոյց է առաջանքները, երթեմն դժուար է լինում փոփոխվում կաւատալ, որ կան հոգու մշտական, ընածին առանձնատյապակութիւնները, կութիւնները Բայց փորձը ցոյց է տալիս մեջ կետևեալը։ Ամեն մի անհատունի առանձին, մի անհալ իրեն յատուկ մտածելու, ցանկանալու և գործելու եղանակը իւրիւն առաջնայական մտածելու եղանակի իւրիւն կեանքի ամենա տարբեր հանդամտնքները։ Վայց փոփոխվում է բնաւորութեան գլխաւորը հիմնական կողմը, որը շրջապատող կեանքի աղդեցութեամբ դառնում է առաւել հզօր, կաղդուրվում և առաւել աղդուն կերպով հանդէս է գալիս։ Դեօթէն իրաւացի էր ասում, « Տաղանդը կաղմ մվում է հանդարտութեան մէջ, ու իսկ ընաւորութիւնը փո-

Թորկալից կեանքում»: Աեանքի փոթորիկները կարող են մի աստիճանն խացնել, մթնացնել անհատական առանձնահատկութիւնները՝ բայց վերջ ի վերջոյ, նոքա գլուխ կը բարձրացնեն բոլոր շերթերի միջից անփոփոխ; և այստեղ ակամայ կը խոստովանես, որ նոքա պահպանուած, էին:

Այս կողմերով կարելի է միշտ ճանաչել մարդուն նորա կեանքի յետագայ տարիներում, նոցանով է երիտասարդութեան բարեկամը ճանաչում իւր ընկերոջը, չը նայելով հասարակական ժամաների դիրքին, որ առաջացել է սկետնքի հանգամանքներից, չը նայելով նոցա բաժանող ժամանակի և տեղի հետաւորսւթեանը:

Պատմակին չունի ոչինչ բնածին բովանդակութիւնն նաև հետեւաբար, բովանդակութիւնը ձեռք է բերում արդեն կեանքում մանկան ամենամատաղ հասակից. այս բովանդակութիւնը պայմանաւորվում է շըջանով և լիտվին կախուած է նորա անհատական յատկութիւններից, որովհետեւ մեզ շըջապատող բոլոր երեսոյթները տալիս են մեզ յալտնի պատկերացումների պաշար, որոնք ուրիշ շըջանում, կարող են և չը լինել. այդպիսով մանկան մէջ կազմակերպվում է առանձին, շըջանից կախումն ունեցող և նորանում ձեռն բերած շըջակայեաց, որից, որպէս անհրաժեշտ հետեանք, կազմվում են առանձին երեւակալութիւններ, զգացումներ և ձգտումներ: Սորանով բնածին առանձնայատկութիւնը ամճում է, մատաղ հասակում շըրջապատող շըջանից ծագելով, և ժամանակի ընթացքի հետ զարդանալով մինչև գիտակցական մտքերի պատկեր, ներկա լացնում է յալտնի իրականութիւն:

Երջանի ազգեցութիւնը պայմանաւորվում է այն տեղով, ուր բնակվում է մանուկը, և մարդոց ընկերութեամբ, որի մէջ նաև յտտվում է: Այդպիսով մանկան մէջ տպաւորվում են որոշ յատկութիւններ այն տեղի ազգեցութեամբ, ուր անցուցել էր իւր երիտասարդութիւնը. միւս կողմից նորա ներքին կեանքը վերայ ազգում է գլխաւորապէս, այն մարդոց կեանքը, որոյ հոգացողութեանը և խնամքին յանձննեւած էր նա, մտնուկ հասակից: Նախ և առաջ մանկան ներքին կեանքը ձեռք է բե-

կարգով առաջ ենթակայից և թէ դորան բացայայտիչ բառերից իսկ յետոյ ստորոգեալից և իրան բացայայտիչ բառերից:

### § 3. Տրամաբանօրէն վերլուծման օրինակ: —

Նախադասութիւն. Ամառը աշխատասէր գիւղացիք մանգաղներով հնձումն իրանց արտը դաշտումը:

1. Ո՞չէր են հնձում արտը. — գիւղացիք:
2. Ի՞նչ են անում գիւղացիք. — հնձում են.
3. Ի՞նչ են հնձում. — արտը:
4. Ի՞նչ են հնձում. — մանգաղով:
5. Ո՞րո՞նց են հնձում. — դաշտումը:
6. Ե՞րբ են հնձում. — ամառն:
7. Ի՞նչպէս գիւղացիք. — աշխատասէր:
8. Ո՞ւ արտն են հնձում. — իրանց:

Նկատողութիւն: Ում հաճելի չէ հարցերի այսպիսի դասաւորութիւնը, նա կարող է հարցերը յետոյ գործածել. միայն պէտք է 'ի նկատի ունենալ, որ միշտ հարցերի կազմութիւնը մի ևնյնը պէտք է մնայ:

### § 4. Տրամաբանօրէն վերլուծման մէջ վարժութեանց կարգը և նոցա նպատակը. —

Կարդացած յօդուածից լնարելով տրամաբանօրէն վերլուծմանն յարմար թեթև նախադասութիւն, կամ աւելի լաւ, յօդուածի կատեխիղացիայի միջնորդութեամբ աշակերտաց ստիպելով կազմել այդպիսի նախադասութիւն, ուսուցիչը առաջ ինքն է հարց առաջարկումն աշակերտները միայն պատասխանումն, յետոյ աշակերտաց ստիպումն է նախադասութեան իւրաքանչեւր բառին համապատասխան հարցեր գտնել օրինակ, այսպէս վերոյիշեալ նախադասութեան մէջ ի՞նչ հարցին կը պատասխանեն գիւղացիք: կամ հնձումնեն արտն... և այլ բառերը: Եթէ աշակերտները առաջին անգամ չեն հասկանում գործի էութիւնը, այն ժամանակ ուսուցիչը կարող է գրատախտակի վերայ գրել նախադասութիւնը՝ «գիւղացիք հնձում են արտը» ջնջել բառը, զոր օրինակ, գիւղացիք և յետոյ հարցնել այժմ ո՞րն է մնում անյայտ: Աշակերտները անպատճառ կը պատասխանեն՝ „անյայտ է, թէ ո՞վքը եր են հնձումն: Հէնց այդ ո՞վքեր են հնձումն: Հարցին պատասխանումէ և ջնջած բառը: Եթէ աշակերտները կը հասկանան ուսուցիչը պահանջը, նորան միայն մնումէ այն, որ հարցերը ըստ կազմութեան լինին այնպիսիք, ինչպէս որ վերևը ցցց է տուած: Աշ-

կերտները շուտով կընտելանան այդ նոր վարժութեանը և առանց գժուարութեան կ'որոնեն ամէն մի նախադասութեան իւրաքանչիւր բասի հարցը: Պէտք է միայն ունենալ համբերութիւն և չուղղել երեխայոց փոքրիկ զանցառական սխալները եթէ առանձին կարիք չը կայ: Պէտք է միշտ հարցերով որոնել դանկացածը: Եթէ մի բանի հարցերից որոնց կարող է պատասխանել վերլուծանելի բառը, աշակերտը կ'ընտրէ հնչնց պյան, որ ուսուցիչը բոլորովին չը սպասում և որը նորան երեռումէ: որ խօսքին քիչ է վերաբերում: այն ժամանակ ուսուցիչը չը պէտք է ուղղէ՝ միջոց չունենալով աշակերտին բացատրելու, թէ ինչո՞ւ համար նորա հարցը պէտքական չէ: Ենթադրենք, օրինակի համար, որ այս հետեւեալ նախագասութեան մէջ՝ «Ճիծեռնակը» մեր տան երթիկի տակ բուն է չլինել: «մեր» բառին աշակերտը հարց է տալիս «որպիսի տան»: Ուսուցիչը առաջին անգամները այդ անձտութիւնը կարող է առանց աշակերտին հասցնէ գիտակցականութեան (աւելացնելով, զոր օրինակ ածական ոհինս») որ «մեր» խօսքին յարմար է գալիս ևո՞ւմն հարցը: Գործին միակերպ ծառայող մի քանի հարցերից պէտք է նոցա նախադասել որոնք միջոց են տալիս վերլուծելու ուրոյն կերպով խօսքերի մեծ քանակութիւն: զոր օրինակ հարցին որպ պիսի երթիկի տակ» աւելի յարմար է պատասխանել բոլոր երեք բառերով «մեր հին տան»: ուստի և պէտք է նախադասել ի՞նչի երթիկի տակ» հարցը, որպէս «տան» բառի աւելի պարզ և յարմար հարց:

Անկասկած է, որ ուսուցիչը միքանի անյարմարութիւններ կը զգայ՝ ի՞նչ է անում՝ հարցումն, վերաբերելով նորան գրութիւն, բայց ո՛չ գործողութիւն ցոյց տւող բայերին, զոր օրինակ ի՞նչ է անում խոտը՝ գեղնումէ: Այդ հարցը անսովորութիւնից շատ արհեստական է երեռում: որպիշեալ խոտը ոչնչ չի անում: այլ նորա հետ ինչ մի բան կատարվումէ: Բայց և ամբողջ տրամաբանօրէն վերլուծումն ինչ մի արհեստական բան է, որով հետեւ հարցնողը, նախադես իմանալով պատասխանը՝ պէտք է ցոյց տայ իրան, որ ինքն այդ չը գիտէ, այլապէս և ել ի՞նչու կը հարցնէ: Սորտ հետ և հարցը տրվումէ ոչ թէ միայն իսօսքի համար, այլ և յայտնի իսօսքից և վերջինը երեխայոց աչքում հարցի բնականութիւնը որոշումէ աւելի քան թէ առաջինը, ուստի և գլխաւորապէս առաջին անգամները երեւայոց ոչ մի կերպ օտարոտի չի երեւել հարցը այն մասին, թէ ի՞նչ է անում իսօսքը թէ և պատասխանը գործողութիւն էլ չը ցոյց տար: Յետոյ ուսուցիչը կարող է աշակերտների ուշադրութիւնը դարձնել մի փոքր ինչ անհամապատասխանութեան

մասին հարցի և պատասխանի մէջ (երբ հարկաւոր կը լինի՝ նոցա հաղորդել ներգործական և չեղոք բայցերի մասին) և նոցա առաջար կել հարցի մի այլ ձեւ, այն է „ինչ է առում առարկայի մա սին և այլն“։ Տրամարանօրէն վերլուծման նպատակն է նախադա սութեան մէջ՝ բառերի յարաբերութեանց հասկացութեանց առը արտայայտվում է նորանով՝ որ աշակերտները կարողանում են իւրաքանչիւր խօսքին հարց առաջարկել Եթէ աշակերտները սովորեցան պահանջած լիակատար հարցեր առաջարկել այն ժամանակ բառերի յարաբերութեանց ցոյց՝ տալլը ոչինչ գժուարութիւն չի ներկայացնում: պատասխանը միշտ հարկաւորէ այն խօսքի համար որը կայ հարցի մէջ, հետևապէս մնումէ միայն հարց առաջարկել և իսկոյն իմանալ թէ ո՞րին կը յարաբերի տուած խօսքը, զոր օր, „մէր“ խօսքը պատասխանում է „ում տան“ հարցին, ուստի կը նշանակէ „տան“ բառին է վերաբերում: որը վերլուծանելի նախա դասութեանց հարցի մէջ մտաւ (նայի՛ր § 2, 1):

## Ե Բ Կ Բ Ո Ւ Թ Ծ Ր Զ Ա Ն

§ 5. Քերականական (սինտաքսիքական) վերլուծման և  
փոփոխական մասունք բանի:—

Տրամարանօրէն վերլուծումից քերականականին (սինտաքսիքա կանին) անցնելը գժուար չէ: Նախադասութեան մէջ „ով“ հարցին պատասխանող բառը կը կոչուի „ենթակայացիւն“: Ենթական նշն պէս պատասխանումէ և „ինչ“ հարցին: բայց սկզբում դրա մասին կարելի է լսել: Թէ և շատ շուտով կարելի է աշակերտաց ցոյց տալ այդ հարցերի համահաւասար նշանակութիւնը, զոր օր: «Ճառը արձակել է մատաղ ճիւղեր»: — այս տեղ «Ճառ» բառին միատեսակ գործ կարող են ածուիլ ո՞վ է արձակել և ինչ է արձակել «հար ցերը, այն ինչ ճիւղեր» բառին միայն մէկ հարց է դալիս՝ „ինչ“, իսկ „ով“ հարցը այսուղեղ բոլորովին անգործ ածական է: Ենթա կայից «ինչ» է անումն ինչ արեց և ինչ կանէ» տուած հարցի պատասխանը պէտք է նախադասութեան մէջ «ստորոգեալ անուանել ինչպիսի, որպիսի, ո՞ր և այլն հարցերին պատասխանը կոչվումէ յատակացից իչ այն բառի, որին յարաբերումէ: Եթէ հարցի առաջին կիսումն (§ 2.—1) կը լինի մէկը այս հետևեալ հարցական բառերից՝ ո՞ւմ-ինչին, ո՞ւմ-ինչ ո՞ւմնով-ի՞նչով, ո՞ւմ մասին-ի՞նչի մասին, այն ժամանակ պատասխանը կը կոչուի այն բառի ոլլացուցիչ, որից առաջարկուած է հարցը:

Աւենալով բանալի նախադասութեան չորս անդամելը զա-

նազանելու, աշակերտները կարող են վերլուծել ընթերցանութեան դրդի մէջ պատահող թեթև նախադասութեանց մեծ մասը... Ի գեաս ուսուցչին հարկաւոր չէ առանձնապէս հօգս քաշելու նրա մասին, որ անպատճառ միայն ընտրէ այնպիսի նախադասութիւններ, որոց մէջ չ'լինին երեխայոց համար անցայտ մնացած անգամները ընդհակառակը պէտք է երեխայոց հասկացնել տալ թէ ի՞նչ չ դիտեն և ի՞նչ գեռ ևս չը դիտեն իրանք:

### § 6. Բառը նախադասութեան մէջ և բառը վերցրած առանձին:

Սինտաքսիքական վերլուծումից մասնաց բանի զանազանելուն անցնելը թէ և մի առանձին դժուարութիւն չէ ներկայացնում: այնուամենայնիւ պահանջումէ միքանի նախապատրաստական վարժութիւններ, թէ ի՞նչի համար մի և նշյն բառը մէկ դէպքում պէտք է անուանել զոր օրինակ ասորոգեալ իսկ միւս դէպքում բայց: Առանց այդ վարժութեանց երեխայք կը շփոթուին երկարժամնանակ, չը հասկանալով, երբ հարկաւոր է անուանել նորան այսպէս, երբ այլ կերպ: Այդ վարժութիւնները շատ հասարակ են: Ուսուցիչը վերցնում է մի որեկիցէ բառ առաջուայ վերլուծուած նախադասութիւններից, զորօրինակ սերեխայք<sup>4</sup> և հարցնում է աշակերտաց՝ այս ի՞նչ կը լինի: Աշակերտները առանց կարծիքի կը պատասխանեն, որ այդ կը լինի ենթակայ: Խսկ եթէ ասել՝ «Երեխային՝ լրացուցիչ» ինչի՞ն.... Այդ հարցերը ուսուցիչը առաջարկում է նորա համար, որ համոզէ աշակերտաց թէ այդ բառը անկարելի է անուանել ենթակայ կամ լրացուցիչ: Դպատակին հասնելու համար ուսուցիչը շարունակում է իւր խօսակցութիւնը: Հարց: ի՞նչ հարցի է պատասխանում ենթական: Պատասխան. «ով» հարցին: Հ. ստուգենք, այդպէս է արգեօք: Այս նախադասութիւն՝ սերեխան գնաց ուսումնարան: Ո՞րն է այստեղ ենթական: Պ. Երեխան: Հ. ինչո՞ւ: Պ. որովհետեւ պատասխանում է սովոր գնաց<sup>5</sup> հարցին: Հ. իսկ ի՞նչ հարցի պատասխանեց առաջուայ (առանձին) վերցրած երեխայ բառը: Պ. «ով» հարցին: Հ. Միթէ այդպիսի հարցի է պատասխանում ստորոգեալը: Այստեղ միայն հարցի կեսն է: Կը նշանակէ, այդ խօսքը արգեօք կը լինի ենթակայ: Պ. Ոչ Հ. ի՞ն-

\* ) Սինտաքսիքական վերլուծման մէջ հարցերի կարգը վեր ցցց է տուած (§ 2. II): Առ սուցիչը խօսու կերպով հետևում է, որպէս զի հարցերով վերլուծման ժամանակ երեխայքը բառերի՝ վրով չ'թուչն, զյուինքն որպէս զի իւրաքանչիւր հետևեալ հարցը տային անպատճառ արգեն վերլուծուած բառից: Երեխայք յաճախ այդպիսի թուիչներ են անում: զօր օրինակ Յ հարցից յետոց (§ 3 մէջ ցցց տուած) առաջարկում են ն դը, իսկ նից յետոց 7 դը ևայլն:

չումն է զանազանութիւնը: Եթէ տրամաբանական և սինտաքսիքա-  
կան վերլուծման ժամանակ ուսուցիչը միշտ պահանջում էր լիակա-  
տար հարցեր: (§ 2—1): այն ժամանակ նորան գժուար չէ աշա-  
կերտաց հասկացնել որ երեխայ բառը կարող է անուանուիլ հն-  
թակայ մի այն նախադասութեան մէջ ։ նա ենթակայ չի լինիլ  
Միւնցնը անվումէ և ստորոգեալի վերաբերութեամբ: Աչա, ձեզ  
կ արդու մէ բառը: Դուք նորան ի՞նչպէս կ' անուանէք: Պ. Ստո-  
րոգեալ: Հ. Ինչո՞ւ: Պ. Նա պատասխանումէ ի՞նչ է անում՝  
հարցին: Միթէ՞ այդպիսի հարցի է պատասխանում ստորոգեալը և  
այլն: Սորանից յետոյ ուսուցչին միայն մնումէ հաղորդել թէ  
ինչպէս պէտք է անուանել այդպիսի բառերն, որոնք առ անձին  
են վերցրած, ոչ նախադասութեան մէջ: Առաջին ան-  
դամները աշակերտները պէտք է կարողանան զանազանել միայն դո-  
յականը, բայց և ածականը: Վերաբերելով բառը թէ այս կամ  
թէ այն դասակարգին, աշակերտը իւրաքանչիւր անդամ բացատրում  
է, թէ ի՞նչ հիման վերայ նա այդ անումէ:

### § 7. Բայերի փոփոխութեանց և գերանուան մասին:

#### I ԲԱՑԵՐԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ.—

Կարճ նախադասութեան սինտաքսիքական վերլուծումից յե-  
տոյ, զորոր, աշակերտը կարդումէ գիրք, ուսուցիչը կատէ-  
խիտիքական ճանապարհով երեխայոց ուշադրութիւնը դարձնումէ բայի ժամանակների զանազանութեան վերայ: Գործը այսպէս է կա-  
տարվում: Գրատախտակի վերայ գրած է վերլուծած նախադասու-  
թիւնը: Հ. Այսեղ ի՞նչ է անում աշակերտը: Պ. կարդումէ:  
Հ. իսկ եթէ նա այդ աներ առաջ ենթադրենք: երէկ, այնժամա-  
նակ կարելի էր ասել ո՞կարդումէ: Պ. ոչ: Հ. Այնժամանակ ի՞նչ  
պէս պէտք է ասել: Պ. Ո՞ետք է ասել աշակերտը կարդաց գիրքը:  
Ուսուցչի պահանջմամբ նոր նախադասութիւնը նցյանպէս զրվում է  
գրատախտակի վրա: առաջինի տակ: Հ. Եթէ ես ցանկանում եմ  
ասել, որ աշակերտը պէտք է սցայ յետոյ անե, ասենք թէ՝ եգուց  
կարելի է ասել ո՞եգուց կարդումէ գիրքը: կամ կարդաց: Պ. Աչ  
պէտք է ասել աշակերտը կը կարդայ: գիրքը: Եւ այդ նախա-  
դասութիւնը նցյանպէս զրվում է գրատախտակի վրա առաջիների  
տակ: Հ. Կարդացէք առաջին նախադասութիւնը, ասում է ուսու-  
ցիչը: Նորա մէջ ի՞նչ է ցցց տալիս ո՞կարդում է՞ բառը, նա ցցց  
է տալիս արդեօք թէ աշակերտը շինեց իւր գործը առ աջ կամ  
թէ պէտք է յետոյ կատարէ: Պ. Աչ այս և ո՞չ միւսը՝ ո՞կար-

գումէ՛ բառով ցոյց է տրվում: որ գործը կատարվումէ սպժմ՝ ներկայ ժամանակում: Հ: Ո՞վ կը կարգայ զրած նախադասութիւններից այն, որից երեսումէ, որ աշակերտը դեռ պէտք է կատարէ: Խոկ այն, որի մէջ ատվումէ: թէ աշակերտը այդ առաջուց կատարեց: Աշակերտները պատասխանումեն: Հ: Համեմատեցէք բոլոր երեք նախադասութիւնները և ասացէք՝ ի՞նչ բառեր կրկնվումեն: Պ: «Աշակերտ» և «զիրք» բառերը մնում են առանց փոփոխութեան, միայն «կարգում է» բառը փոխվում է զիած երեք նախադասութեանց իւրաքանչիւրի մէջ: Հ: Ի՞նչի համար մենք նորոն փոխեցինք: Պ: Ցոյց տալու համար թէ երբ է գործը կատարվում (կարձ-ժամանակը ցոյց տալու համար): Դորանցից յետոյ ուսուցիչը հաղորդումէ աշակերտներին բայի ժամանակների անունները՝ ներկան, անցեալն և ատառնին և վարժեցնում է նոցա այդձեւերի փոփոխութեանց մէջ օրինակներով տալով՝ առանձին վերցրած բայիր:

## II ԲԱՅԵՐԻ ԴԵՄՔԵՐՆ: —

«Աշակերտը կարգումէ զիրք»: Ում մասին եմ այսուղ ես խօսում: Պ: Աշակերտի մասին: Եթէ աշակերտը ինքն իւր մասին խօսէր այն ժամանակ նա ինչպէս պէտք է ասէր: Նոյնպէս հարկաւոր էր արդեօք ասել՝ «աշակերտը կարգումէ զիրք»: Եթէ երեխայք չեն կարող պատասխանիլ այն ժամանակ ուսուցիչը նկատողական միջոց է գործ ածում: Աչա գու աշակերտ ես, ասենք թէ գու կարգում ես զիրք, և ես քեզ հարցնում եմ՝ ի՞նչ ես անում: Դու ի՞նչպէս ինձ կը պատասխանիս: Պ: «Ես կարգում եմ զիրք»: Այդ նախադասութիւնը գրվում է գրտափառակի վերայ առաջին (1) թւով և վեր է լուծվում սինտաքսիքաբար: Յետոյ ուսուցիչը շարունակում է սում մասին է այսուղ խօսվում: Ո՞վ է այս «եսը»: Պ: Նա: ով ինքն իւր մասին ասում է: Հ: Այսեղ, կը նշանակէ: Խօսովն ինքն իւր մասին խօսում է և իրան անուանումէ «ես»: Խոկ եթէ քի հարեւնդ կարգումէ զիրք և գու ցանկանում ես, դառնառ լսվնոր ան հարցնել թէ նա ի՞նչ է անում: այն ժամանակ ինչս պէս կ'ասես: Պ: Միայն հարկաւոր է նորան գառնալ խօսքով և ոչ թէ ինձ: Պ: Դու կարգում ես զիրք: (Գրվումէ գրատախատակի վրա Զ թւով և վեր է լուծվում քերականօրէն): Հ: Ո՞մ մասին է այսեղ խօսվում: Պ: Ոչ-ոքի մասին—ոյգպէս ասումեն, դառնառով ուրիշ մարդու: Հ: Գրեցէք երրորդ նախադասութիւնը՝ նա կարգում է զիրք: Թուր երեք նախադասութեանց մէջ փոխուած է արդեօք «կարգալ» բայը, կամ մասցել է արդեօք առանց

փոփոխութեան: Պ. Փոխուածէ: Հ. Ի՞նչ ժամանակումն է առօւած բայը իւրաքանչիւր նախադասութեան մէջ: Պ. Ներկայ: Սրանից յետոյ ուսուցիչը հաղորդումէ: որ բայի այդ նոր փոփոխութիւնը կոչվումէ փոփոխութիւն ըստ զիմաց, բայց ոչ թէ ըստ ժամանակաց, երեք գէմք կայ: I, II և III, Դէմքերի մէջ վարժեցնելու համար ուսուցիչը օրինակներ է առաջ բերում: Թուերի փոփոխութիւնը դժուար չէ բացատրել:

## III. ԴԵՏԱՆՈՒՆՆԵՐ.—

Հ. Գրեցէ՛ք դրատախտակի վերայ երկու նախադասութիւն Սարգիսը չէ սովորում դասը, Սարգիսը գիրք է կարգում: Զի՞շարելի արդեօք երկու անգամ չը կրկնել Սարգիս: Պ. Կարելի է ասել՝ Սարգիսը չէ սովորում դասը, նա դիրք է կարգում: Հ. Աերցնենք «Նա» բառը առանձին, այդ ի՞նչպիսի բառ կը լինի: Աշակերտները շատ կարելի է կասեն՝ Պոյական անուն: Այն ժամանակ ուսուցիչը ասումէ՝ «ո՞վ է այդ նա»: Պ. Սարգիսը: Հ. Միայն մէկ Սարգսի մասին կարելի է «նա» ասել: Պ. Աչ երեխայ, հայր, ում ցանկանում ես, բոլորը «Նա» կը լինի: Հ. Ալ նշանակէ—«Նա» կը լինի արգեօք անուն: — Աչ: «Նա» բառը փախարինումէ այն բառին, որի մասին խօսվում է անուան փոխարէն է գրվում ուստի և կոչվումէ գերանուն (անուան՝ գեր կատարող): Յետոյ ուսուցիչը բացատրումէ թէ՝ ում է վերաբերում խօսքը, այն ժամանակ կարելի է և նորա անունը չը տալ: Ի՞նչ բառ են գործածում՝ այն անուան տեղը, որի հետ խօսում են: «Դոււ կամ» «Դուք»: Ալ նշանակէ՝ գու-նոյնպէս գեր անուն է: Յետոյ աշակերտները իրանք պէտք է ցոյց տան, որ «Ես» բառը նոյնպէս գերանուն է:

Նկատողութիւն: Միաժամանակ գերանուան մասին առաջին հասկացողութեան հաղորդելովն պէտք է ընդլայնել (մի քանի օրինակներ վերլուծելով) աշակերտաց հասկացողութիւնը գոյական անուան մասինայսինքն այսպէս՝ գոյական անունը ոչ թէ միայն պատասխանումէ «ո՞վ» նշանը: Հարցերին և այլն և ծառայում նախադասութեան մէջ իրակ հետակայ կամ լրացուցիչ այլ և առաջ կայի անունն է ցոյց տալիս:

Առաջին անգամները բաւական է միայն ցոյց տալ անձնական գերանունները: Թէև գերանունները առ հասարակ թվվումն քերականութեանց մէջ, բայց նոցա բոլորը բերան անել կարիք չը կայ: Որովհետեւ նոցանից իւրաքանչիւրի գերանուանականութիւնը համարեա թէ հեշտ կարելի է ապացուցանել: Եթէ վերլուծանելի նախադասութեանց մէջ պատահումնեն գերանուններ, ուսուցիչը ծանօթացնումէ նոցա երեխայոց, պահպանելով աստիճանաբար ան-

ցումն հեշտից դէպի աւելի դժուարն։ Դժուարութեան համեմատ գերանունները դասաւորվում են այս կարգով՝ անձնական գերանուններից յետոյ ցուցականները, յետոյ ստացականները և անորոշները և, վերջապէս, հարցականները և յարաբերակունը։ Ծանօթութեան համար այսուեղ յառաջ է բերվում մէկ մէկ օրինակ իւրաքանչիւր սեռի գերանուններից, ցոյց տալով նոցա գերանուանականութիւնը։  
«Են»—բոլոր ածականների տեղ, որոնք կարող են առարկաների անուանն յարակցուել սորտ հետ և ցոյց տալ դոցա տարածութիւնը խօսող անձից։

«Են»—ածականի տեղ, որը առաջացած է այն յատուկ անունից, որը խօսումէ։

«Ոք մին»—անյայտ առարկայի անուան տեղ։

«Ոք» է խօսում։ Խթէ լեզուի մէջ «ոք» բառը չը լինէր, այնպէս պէտք էր թուել այն բոլոր անձանց անունները, որոնք խօսում են, զորօրին։ Դրիգորիսը չէր արդեօք, Յովհաննէսը չէր և այլն սցդակիսի օրինակներ։

«Որ» ցոյց է տալիս երկու նախագասութեանց միջի յարաբերութիւնը և բացի գորանից ենթակայի փոխորէն է զբարում երկրորդական նախագասութեան մէջ։

### §. 8. Հոլովումն.

Հոլովման մէջ առաջին վարժութեանց համար պէտք է ընտրել անպատճառ երեխայոց բոլորովին յայտնի գոյականներ, որոնք յաձախ գործածուելիս լինին իրանց խօսակցութեանց մէջ։ Դրանից յետոյ ո՛չ գոյական անուանց այս ինչ կամ այն ինչ դասակարգ հօլովման պատկանելը և ո՛չ քերականական կանոնաւոր փոփոխութիւնները չը պէտք է հաշուի տակ գցուին, որովհետեւ ամենագործածական բառերը կազմում են հոլովման մի այլ կարգ, զորօր։ Հայր, մայր, քոյր եղբայր և այլն։ Ուսուցիչը այդ բացառական ձևերով չը պէտք է սահմանափակուի։ Հոլովմանց դասակարգական ձեւը ապագայի գործ է, միայն այժմ զլխաւոր նպատակն է երեխայոց ուշաղրութիւնը գարձնել այն փոփոխութեանց վրա, որոնց միշտ իրանք նկատում են խօսակցութեանց ժամանակ, տալ դոցա ձեւ և այդ փոփոխութեանցն անուն։ Առաջին անգամ հոլովումն պէտք է կատարուի անպատճառ նախագասութեանց մէջ, որի համար ուսուցիչը կանխապէս կարող է պատրաստել ձեւը մօտաւորապէս այս տեսակ։

Աշակերտը եկաւ դասատուն։

Աշակերտի դասը պատրաստ է։

Փրաջան աշակերտին տուին ընծայ։

Ուսուցիչը սիրումէ ժրաջան աշակերտին։

Մենք զրկուեցանք լաւ աշակերտից:  
 Աւսուցիչը աշակերտով զբաղուածէ:  
 Աշակերտի մէջ ծուլութիւն է նկատվում:  
 Այս վարժութեանց ժամանակ անպատճառ պէտք է դորձ  
 ածել հոլովների հարցերը՝ օվկինչում—ինչի և այլն: Սրանից յետոց ուսուցիչը կը հաղորդէ հոլովների անունները, որ պէտք է սովորին աշակերտները անշուշտ հարցերով. ուսուցչին միայն մնում՝ է հետեւ որպէս զի վերլուծմանց ժամանակ երեխայք անսխալ կերպով անուանէին հոլովները իրանց համապատասխան հարցերով. որի համար նոքա միշտ պէտք է երկու հարցերը միասին ասեն թէ շնչաւոր և թէ անշունչ առարկաներին վերաբերեալ:

### § 9. Թուական անուններ:

Աստիճանաբար ընդլայնելով սինտաքսիքական վերլուծումն ուսուցիչը յայտնումէ աշակերտներին, որ նախագասութեան մէջ որք ան և քանի հարցերին պատասխանող բառերը կոչվում են յատկացուցիչ իսկ առանձին վերցրած—թուական անուններ: Թուական անուան մասին եղած հասկացողութիւնը այժմ կարելի է լրացնել և աւելի ամրացնել ուրիշ միջոցով՝ աշակերտները փաղուց արդէն պարտպում են թուահամարութեամբ և կարողանում են գրել թուերը, ուստի և ուսուցիչը կարող է յայտնել նոցա, որ թուական կոչվումէ այն բառը, որը նշանակում է համբանք և կարող է արտայայտուիլ թուերով:

Ե Բ Բ Ո Բ Դ Շ Բ Զ Ա Ն.

### § 10. Պարագայական բառեր:

Սինտաքսիքական վերլուծումն լրացնելու համար հարկաւոր է և տեղեկութիւններ տալ պարագայական բառերի մասին: Հանդամանկների զանազաններ բաւականին դժուար են ըմբոնում երեխայքը: Բայց խիստ կերպով ընդունելով հարցական մեթօդը, ուսուցիչը հետո կը դանէ միջոց գործը պարզելու և երեխայոց համար բոլոր վերաբերեալ հասկանալի գարձնելու:

Նթէ երեխայք սովորել են զանազաննել ենթական, ստորոգեալըն, յատկացուցիչն և լրացուցիչն, այն ժամանակ ուսուցիչը կը հաղորդէ նոցա, որ բոլոր մնացած բառերը, որոնք նման չեն նախագասութեան յայտնի անդամներից ոչ մէկին, կը կոչուին պարագայական բառերը նման են լրացուցիչներին, ուստի և շփոթութիւն կը յառաջանայ: Միայն հարկաւոր է իմանալ որ թէսէտ պարագայական բառերը և' ամբողջացնում են ստորոգեալի միտքը:

միայն այդպիսի գեղոքերում լրացուցիչները զանազանվում են՝ պարագայականներից նորանով՝ որ առաջնները աւելի սերտ կապ ունին առողջեալի հետ։ Քան թէ վերջինները, Առանձին վերցրած պարագայական բառը աշակերտները կը յատկացնեն։ Կամ համապատասխան մասանց բանին, կամ թէ կը նկատեն, որ յայտնի մասնց բանիններից ոչ մէկին չկարելի վերաբերել։ 2ը շտապելով երկիրաներին հաղորդել նոր մասանց բանինների անունները, ուսուցիչը մի քանի ժամանակ վարժեցնումէ նոցա փռ փռի և անփոխ բառերի զանազաննելում։ Հոլովելի կամ խոնարհելի բառերը պատկանում են փոփոխականներին։ Խոկ նոքա, որոնք ոչ հոլովում են, ոչ խոնարհվում—վերաբերում են անփոխներին։ Այդպիսով երեխայք կարող են վերլուծել նախադասութեան իւրաքանչեւր բառը, որոց հետ և նախդիրները և շաղկապները, թէ և այդ մասանց բանինների անունները գեռ ևս չը դիտեն։

### § 11. Մակրալներ, նախդիրներ և շաղկապներ։

Տի որեկից նախադասութիւնից հանելով անփոխնելի բառերը և գրելով գրատախտակի վրա, աշակերտները ուսուցչի օգնութեամբ համեմատում են նոցա մէկը միւսի հետ։ Զորօր, այժմ բառանց, և, այդ բառերը միմեանց նաև են նորանով՝ որ կոքարութը չեն փոխվում։ այսինքն ոչ հոլովում են և ոչ խոնարհվում։ Այժմ տեսնենք թէ դոքա ի՞նչով են միմեանցից զանազանվում (Ուսուցիչը նոյնպէս հարցական ոճն է ընդունում)։ Այժմ պատասխանում է երբ հարցին։ առանց և եւ բառերին անկարելի է հարց գտնել։ Յետոյ երեխայք բաժանումն անփոխների բառերը երկու կարգի՝ առաջինին յատկացնում են այնպիսիք, որոնց հարցեր կարելի է առաջարկել երկրորդին, որոնց հարցեր չեն առաջարկվում։ Մակրայի մասին հասկացողութիւնը արդէն պատրաստ է, մնումէ միայն նորա անունը, տալ նախընթաց վարժութիւններից երեխայոց յայտնի է միայն նմանութիւնը մնացեալ անփոխների բառերի (նախդիրների և շաղկապների)։ հետևադէս ուսուցչին մընումէ ցոյց տալ և դոցա զանազանութիւնը։ Այդ զանազանութիւնը ի՞նչումն է կայանում։ Վերցնենք միքանի այդպիսի բառեր՝ առանց եւ բայց, համար եւայլն։ Նոցա հարցեր տալ անկարելի է։ Բայց երեխայք մէկ չափ ունին—այն է հարցեր կառաջարկեն բառ երս երսով (§ 4)։ Արդարև այդ բառերից միքանինները իրանք իրանց առաջարկում են հարցեր՝ առանց ո՞րի, ո՞ւմ համար։ Միւսները իւրեանցից յետոյ ոչ մի հարց չեն պահանջում։ Իւ բայց կարելի է դոցանից յետոյ գործածել ինչ հարց և կուղես։ բայց և այնպիսի, որ նոքա պահանջէին, այդպիսիք անկարելի է գտնել։

Վերև յիշած նշաններով բառեր որոշելու մէջ մի քանի վարժութիւններից յետոյ ուսուցիչը ասում է՝ աշակերտներին, որ իրանցից հարցեր պահանջող բառերը անուանվում են նաև դիրեներ իսկ այդ ըլ պահանջողները—շաղկապներ—

**§ 12. Միաւորեալ նախադասութիւն:** Շաղկապի մասին և անփոփոխելի մասանց բանիները մէկը միւսից գանձագանելու բացատրութիւնը:

Վերև յիշած հասկացողութիւնը շաղկապի մասին պկզբում բաւական է, որպէս արտաքին և առաւել նպաստաւոր նշանի վրա հիմնուած։ այդ շուտով պէտք է կրկին լրացնել աւելի եական նշաններով որովհետև մի քանի մակրայներ, զոր օր կրկին, արդէն մի այն, երեխայք իրաւոնք ունին յատկացնել շաղկապներին։

Միաւորեալ նախադասութեան մասին ունեցած հասկացողութիւնից (որը գգուար չէ, բացատրել) ուսուցիչը շաղկապի համար նոր նշան է ձեռք բերում այսինքն՝ շաղկապն անկարելի է այնպիսի նախադասութեան մէջ, ուր բոլոր անդամները միայն մէկ-մէկ են։ Եթէ բառը կարելի լինի և այդպին նախադասութեան մէջ, այն ժամանակ նա շաղկապ չէ։ Եթէ նա ոչ շաղկապ է և ոչ նախադիր ուստի նորան պէտք է յատկացնել մակրայներին, այսինքն այնպիսի բառերին, որոնք նախադասութեան մէջ գրուելով հաշորդում են նորան մի այլ նշանակութիւն։

Անփոփոխելի բառերին պատկանում է նոյնպէս ձայնաբառ ութիւնը։ Նորան ուսուցիչը պէտք է ծանօթացնէ աշակերտներին բոլոր մասանց բանիներից յետոյ։ Հարցական ոճը պատեղ հարկաւոր չէ, որովհետև ձայնաբառութիւնները բառեր, չեն, այն են, կամ ձայնական միացումն որոնք արտայայտում են զանազան զգացմունքներ։ Զայնարկութեան մասին ունեցած հասկացողութեամբ սկսվում է ուրիշ ոչ տարրական գասլներացը, որի մէջ զլիսաւոր ուշագրութիւնը գարձնվումէ ոչ թէ արտաքին նշանների այլ քերականական բաժանմանց ներքին նշանակութեան վերայ։

**§ 13. Երկրորդական նախադասութեանց հետ ծանօթաց նալու կարգը։**

Երկրորդական նախադասութեանց հետ ծանօթանալուց առաջ պէտք է բացատրել նախադասութեան մասին առ հասրակ։ Եւրաքանչիւր խօսակցութիւն, որի մէջ կայ իւր ենթական և ստորգեալն, կաղմումէ առանձին նախադասութիւն։ Լրացնելով այդպիսով նախադասութիւնը որը հա-

զորդուած է § 1 ու մն, ուսուցիչը կարող է անցնել երկրորդական նախագահութեանց:

Քերականական վերլուծմանց ժամանակ երեխայոց միքանի անգամ պատահել է, որ տուած հարցին պատասխանումէ ոչ թէ մէկ, այլ միքանի խօսք, զորօր, ժրաջան աշակերտը զնումէ ուսումնարան իւրաքանչիւր օր, այստեղ «Երբ» հարցին պատասխանում են երկու բառ. «Իւրաքանչիւր օր»: Այդպիսի գեղքերով ուսուցիչը կարող է օդուուիլ երեխայոցը թեթևացնելու երկրորդական նախագահութեանց անցնելու համար: Երեխայր վեր են լուծում օրինակի համար, «Ես չը գիտեմ» ո՞ւր գնաց հայրս: Ի՞նչ չը գիտեմ: Այդ հարցին պատասխանում են բոլոր մնացած բառ երբ մրասին վերցրած: Հետեւալիս նորա բոլորը իրեւ լրացուցիչ կը լինին չը գիտեմ բառին: Բայց վերլուծելով այդ նախագահութիւնը (առանց ուրբա բառի)՝ երեխայր կը տեսնեն, որ նորանում կայ իւր ենթական և իւր ստորոգեան: Այսինքն՝ նա ամերող նախագահութիւն է: Լրացուցիչ նախագահութիւնների վերլուծելուց յետոյ ոէտք է լինի վերլուծումն յատկացուցիչ: (անպատճառ լինկատար) և, վերջապէս պարագայական, նոյնպէս լինկատար, նախագահութիւնների վերլուծումն: Սրանից յետոյ այսպիսի եղբակացութիւն է անգում՝ եթէ հարցին պատասխանումէ ոչ թէ մէկ, այլ միքանի բառ, որոնք իրանք իրանց նախագահութիւն են կազմում: այն ժամանակ այդպիսի նախագահութիւնը կոչվում է երկրորդական-լրացուցիչ, յատկացուցիչ և պարագայական նայելով հարցին:

Երկրորդական նախագահութիւնների կրճատմամբ ուսուցիչն առիթ ունի աշակերտաներին ծանօթացնել գերբայներին, միայն չէ հարկաւոր խօսել այնպիսի երկրորդական նախագահութեանց կը քատաման եղանակի մասին, որ կրճատուելուց յետոյ կորցնում են նախագահութեան բնաւորութիւնն: գառնալով հասարակ լրացուցիչներ և պարագայականներ:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ:

Անցնելով քերականութեան այս յօրինուած տարիթական դասնթացը, երեխայր այնչափ պատրաստուած կը լինին, որ կարող են ուսանել քերականութիւնը մի որ և իցե ձեռնարկով: Քերականական գասակարերի որոշումները, որ առաջարկուած են գասակը քերում: միայն կը լրացնեն այն հասկացողութիւնները այդ գասակարերի վերաբերեալ, որ երեխայր սովորել են հարցական մեթօդի օգնութեամբ: իսկ հարցական մեթօդը կը թեթևացնէ երեխայոց համար գասագըքի որոշումների հասկանալը: Ի գեպս պէտք է յիշեմ: որ մշտագպէս երբ երեխայր սովորել են հարցական մեթօդով զանազանել նախագահութեանց անդամները: հար-

ցական մեթօդը գործածելու կարիք չ'կայ. դա միայն սկզբում կը հարկաւորի որպէս թեթևացնող և ստուգող՝ այն էլ քերականական վերլուծմանց գժուար միջոցներին. Զոր օր. անդէմ նախաղասութեան վերլուծման ժամանակ երեխայք ստորոգեալն ցցյց են տալիս սովորաբար ըստ գուշակման. Հարցական մեթօդը տալիս է նոցա միջոց ստուգելու իրանց գուշակումն և ուղղելու իւրեանց սխալունքը այսինքն եթէ բառին ուրիշ բառերից չկ կարելի հարցել միաց առաջարկել միայն իրանից տալով հարցեր կարելի կը լինի առանց թոփչքների վերլուծել նախադասութեան բոլոր բառ երբ, այնժամանակ այդ բառը անկասկած ստորոգեալ է. Նոյն եղանակով երեխայք գտնումեն բաղադրեալ նախադասութեան մէջ գլխաւորը, որը անյայտացած է շատ երկրորդականների մէջ, այս ինքն այն նախադասութիւնը որից հարցեր առաջարկելով կարելի է առանց թոփչքների վերլուծել բոլոր երկրորդական նախադասութիւնները, դա անկասկած զլիաւոր կը լինի. Եթէ վերլուծանելի նախադասութեանց մէջ կը պատահի այնպիսի, որին չկ կարելի ոչ մի հարց առաջարկել այն ժամանակ այդ ճիշտ նշան է, որ դա ևս գլխաւոր կամ անկախ նախադասութիւն է:

ԳՐԻԳՈՐԻԱՆ ԵՐԶՆԿԵԱՆՑ:

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԼՈՅՍ ԵՒ ԿԵԸՆՔ

Գործարանաւոր էակը, որ մենք տեսնում ենք երկրագնդի մակերեւոյթի վերայ, չէ ապրում միայն կերակուրով եւ մժնողորտի օգով, այլեւ հարկաւոր է նորան տաքութիւն, էլեքտրականութիւն եւ լոյս։ Նորա գործարաններն ենթարկուած են երկու տեսակ ազդեցութեան՝ նեիրին միջնավայրի, որից կազմուած է նորա մարմինը եւ արտաքին երեւոյթների, որոնցով նա չըջապատուած է։ Ներքին եւ արտաքին միջնավայրերի եւ էակների մէջ եղած այս սերտ կապը թեպէտ շատ պլարզ է եւ հարկաւորութիւն չկար նորան իմանալու, սակայն մի եւ նոյն ժամանակ այնքան բարդ է, որ պահանջում էր գիտնական քննութիւն։ Այս պատճառաւ մեր ժամանակին այդ հարցը ենթարկուեցաւ խորամուխ եւ կանոնաւոր քննութեան, որի հետեւանքները ներկայացնում են նշանաւ որ օգու տնիր։ Այս գէպքում մանաւանդ լոյսը մեծ դեր է խաղում եւ արժանի է խորին ուշագրութեան։

Եթէ քննենք գործարանաւոր էակին սորա զարգացման ամենապարզ աստիճանի վերայ, կամ եթէ նորա գործարանները ներկայացնենք ամենաբարձր գարգացման մէջ, ամենայն տեղ լոյսի ազդեցութիւնը նորա վերայ երեւում է թէ մասնաւոր եւ թէ անակնկալ Գեղեցիկ ձեւերը, ինչպէս եւ պայծառ գոյները, կեանքից թագցրած ներգաշնակութիւնն նաեւ չքեզ ծաղկափթութիւն խորհրդաւոր կապ ունին այն ոսկեայ շողերի չետ, որ արեւը ուղարկում է աշխարհին։

Այս տեսակէտից հնագոյն պատմութիւնը մեզ համար գեղեցիկ փաստեր է թողել՝ թէ ինչպէս նախնական մար-

դը երկրպագում էր արեւին, թէ ինչպէս այդ մանուկ ժողովուրդը սարսափ էր զգում, երբ երեկոյեան տեսնում էր ծիրանագոյն գնդակը կամաց կամաց թագչելիս հորիզոնից, պահելով իւր սրտի մէջ նորա զօրութեան եւ շքեղութեան գաղափարը: Այս հեթանոսական բարեպաշտութիւնը ոչ թէ միայն վկայում էր նորա երախտագիտութեանը դէպի արեգակն, որ տարածում էր երկրիս վերայ ամենայն տեսակ բարիք, այլ եւ մի յարգանք էր ի տրիտուր իւր միսիթարութեան եւ ուրախութեան: սա մի նշան էր այն բնական կանչի, որ կար մարդու եւ լոյսի մէջ: Միւս կողմից՝ երկրագործները, պարտիզանները, բժիշկները համաձայն են վկայելու լոյսի բարերարութիւնը: Ամենայն երկրի եւ ժամանակի բնագէտներն ու ճանապարհորդները՝ յափշտակուելով արեւի զօրեղ կարողութիւնից, վերագրել են նորան ամենայն տեսակ գործունէութիւն: Բայց եւ այնպէս լոյսի աղդեցութեան հարցն երկար ժամանակ մնում էր առանց հետազօտութեան եւ միայն ժլ դարում նա ենթարկուեցաւ ծանր քննութեանն եւ այս խոկ պատճռով այս ընդարձակ եւ բարդ խնդիրը, չը նայելով անթիւ աշխատանաց, դեռ եւս մասամբ է վճռուած: Նատ պահան տեղեր են մնացել լրացնելու եւ շատ անյայտ բաներ լուսաբանելու: Բայց եւ այնպէս մենք կարեւոր ենք համարում այստեղ առաջ բերել այն ինչ որ առ այժմ գիտնակաների ջանքերով բաւականաչափ պարզուել եւ լուսաբանուել է:

## Ա.

Բոյսերը կերակրվում են, սպառելով իւրեանց արմատներով հողի որոշ նիւթեր եւ լուծելով իւրեանց կանաչ մասերի օգնութեամբ մթնոլորտի մասնաւոր գագ—ածխաթթու նոքա լուծում են այդ գակը ածխածնի, որ նոքա իւր ացնաւմ են, եւ թթուածնի, որ արտաշնչում են: Այս երեսոյթը, որ բոյսերի շնչառութեան եղանակն է, կարող է կտարուել միայն արեգակի լոյսի միջնորդութեամբ:

Անդեալ դարու միջին թուականներում առաջին անգամ լոյսի այս միջնորդութիւնը ստուգեց Ժենեվացի դիտնական Շարլ Բօնէ տը: Նա նկատեց որ բոյսերը աճում են ուղղահայեաց եւ ձգտում են զեպի լոյս, ինչպէս Էլ ցանած ըլ լինի նոցա սերմը գետնի մէջ: Նա ապացուցեց, որ խաւարի մէջ բոյսերը ուղղվում են լոյսի կողմը եւ թէ ծրի մէջ ընկղմած բոյսերը արտադրում են իւրանցից գազային փամփուշտներ արեգակի ազգեցութեան տակ: 1771թ. Անգլիայում Պրիստլէի գիտնականը մի այլ փորձ արեց: Նա վառած մոմը մացրեց ամենայն կողմից փակած տեղ եւ մոմը փոքր ժամանակից յետոյ հանգաւ, որովհետեւ այնտեղ այլ եւս ըլ կար օդի թթուածինը, որ մոմի տյրուելուն օգնէր: Բայց երբ նա մացրեց այդ տարածութեան մէջ թարմ բոյսի կանաչ մասերը, տաս օրից յետոյ, այնտեղի օդը այնչափ մաքրուել էր, որ կարելի եղաւ կրկին վառել մոմ: Այսպէս նա ապացուցեց, որ բոյսերը կարող են մաքրել իւրեանց արտաշնչած թթուածնով այրուելուց ապականած օդը: Տասը տարուց յետոյ հոլանդացի բժիշկ Խնդէնչուսը նկատեց որ բոյսերին յատուկ է մաքրելու ապականիալ օդը ոչ միայն վեց կամ աւելի օրուայ մէջ, ինչպէս երեւացել էր Պրիստլէի փորձից, այլ թէ նոքա պահանջում են աւելի պական ժամանակ այդ գործը կատարելու համար: Այս զարմանալի գործը ոչ թէ բոյսին պէտք է վերագրել, այլ բոյսերի վերայ արեգակի լոյսի ազգեցութեանը: Այս երեւոյթը սկսվում է հենց այն բոպէից, երբ արեգակը ծագում է եւ ամենեւին դադարում է գիշերը: Նոյնը լինում է բարձր շինութեանց կամ բոյսերի ստուերի տակ. այստեղ աճող բոյսերը չեն մաքրում օդը, այլ ընդհակառական արտաշնչում են մեզ համար անառողջ օդ եւ տարածում: Են մեզ շրջապատող օդի մէջ կատարեալ թոյն: Այսպէս լաւ օդի արտադրութիւնը սկսվում է նուազել օրուայ վերջը եւ բոլորովին դադարում է արեգակի մայր մոնելուց յետոյ: Ատկայն բոյսի բոլոր մասերը չեն զբաղուած, օդի մաքրելովը, այլ այդ դերը կատարում են միմեայն տերեւներն եւ կանաչ ոստերը:

Բոյսերի ցերեկը սպառած անմաքուր օդը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ածխաթթուն, որ ստացվում է վառած մոմից կամ կենդանիների շնչառութեան ժամանակ. խոկ մաքուր օդը՝ նորանից լուծուած թթուածինն է: Բոյսերի գիշերային շնչառութիւնը հակառակ է նորա ցերեկուայ շնչառութեանը: Այս երեւոյթի մէջ գլխաւոր դեր խաղում է արեգակի լոյսը. տաքութիւնը չէ կարող փոխանակել լոյսին այս գործի մէջ: Բոյսերը սպառելով մթնոլորտի օդը իւրեանց տերեւների կիսալուսնակաձեւ խորշերի (խոչակների) օգնութեամբ արեգակի ազգեցութեան տակ լուծում են նորան ածխաթթուի, որ մնում է այնտեղ եւ թթուածնի, որ իսկոյն արտագրում են: Սակայն արտագրած թթուածնի եւ սպառող ածխաթթուի քանակութեան մէջ զանազանութիւն կայ: Թթուածինն առ հասարակ պակաս է ածխաթթուի քանակութիւնից: Բոյսերի կանաչ մասերի այս գործողութիւնը կատարվում է արագ եւ ազդու: Եթէ ջրով ամոնի մէջ դնենք տերեւներ եւ դնենք այդ ամանը արեւի տակ, տերեւների մակերեւոյթի վերայ կը լուծուին մաքուր թթուածնի անմիւր բշտիկներ. բաւական է ամպի ստուերը, որ գոյա լուծուիլը իսկոյն նուազի, խոկ ամպի չեռանալուց, յանկարծակի ներգործութեամբ նորից սկսվում է նոյն երեւոյթը: Պահպանելով բոյսը արեգակի ճառագայթներից, շատ պարզ կարելի է նկատել, որ գաղային բշտիկների արտագրութեան մէջ լինում է փոփոխակի թէ արագութիւն եւ թէ նուազութիւն, նայելով թէ բոյսը ստանում է լոյսի ճառագայթները թէ ոչ:

Մինչեւ այժմ ասածը վերաբերում էր սպիտակ լոյսի ներգործութեանը, այսինքն ամբողջ ճառագայթին, որ արեգակը մեզ ուղարկում է: Բայց այդ լոյսը պարզ չէ: նա բաղկացած է մի քանի շառաւիզներից, որոց գոյնն ու յատկութիւնն որոշ են: Եթե սպիտակ լոյսը հատուածակողմի միջով լուծում ենք, ստանում ենք եօթը կարգ տեսանելի եւ անհաւատար բեկման շառաւիզներ՝ մանուշակագոյն, կտապոյտ, երկնագոյն, կանաչ, դեղին, նարնջագոյն եւ կարմիր: Այսպէս ստացուած արեւանկարը երկա-

րանում է եւ տարածվում անուհանելի շառավիղներով՝ կարմից գուրս լինում են տաքութեան մուժ շառավիղներ, կամ տաք շառաւելի զներ, մանուշնկագոյնից գուրս—քիմիական շառաւելիներ, կամ անդրման ու շակագոյն շառաւելի զներ, Առաջինները ներգործում են ջերմաչափի վերայ, իսկ երկրորդք ազդում են քիմիական բաղադրութեանց վերայ, Երբ կարելի եղաւ արեգակի ճառագայթը այս կերպիւ լուծել, իսկոյն հարց զարթեցաւ թէ արգեօք արեգակի լոյսը ինչպէս է ազդում բուսականութեան վերայ իւր գունաւոր, ջերմութեան թէ քիմիական շառաւելիներով:

Այս հարցը բազմամիւ եւ նշանաւոր աշխատութեան առարկայ դարձաւ, բայց եւ այնպէս անկարելի է գեռ եւ նորան վճռուած համարել: Թիու 1836 թ. առաջին անգամ փորձեցին ջնջել տալ բոյսերին գոյնդգոյն ապակիների տակ եւ երեւեցաւ որ բոյսերը այդ տեսակ ապակիների տակ աւելի պակաս քանակութեամբ անջատում են թթուածին, քան թէ սպիտակ լոյսի տակ: Այս փորձի ժամանակ նկատ տել էին որ այդ գործը աւելի ազդու կատարվում է նարնջագոյն յետոյ երկնագոյն շառաւելիներից: Մի քանի տարից յետոյ մի գիտնական գրել էր զժգոյն բոյսեր արեւանկարի զանազան շառաւելիների տակ եւ նկատել էր, որ բոյսերը կանաչել են չուտով գեղին եւ սորա հարեւան շառաւելիների ներգործութեան ներքոյ: Այս փորձի ժամանակ կանաչ գոյնը ստացուեցաւ դեղին շառաւելիներից երեք եւ կէս ժամուայ մէջ, նարնջագոյն շառաւելիներից—չորս եւ կէս ժամուայ մէջ, իսկ մանուշակագոյն շառաւելիներից—միայն տասն եւ ուժ ժամից յետոյ Սորանից երեւեցաւ, որ բոյսերի վերայ արեգակի ներգործութեան աւելի մեծ ազդուութիւնը չէ անցնում ոչ տաքութեան առ առաւելը, որ կարմիր շառաւելիք ծայրին է, ոչ քիմիական զօրութեան առ առաւելն, որ արեւանկարի միւս ծայրումն է գոտնլում, այսինքն մանուշակագոյն շառաւելիների տակ: Ամենաներգործող շառաւելիները՝ քիմիական կէտից նայեած, նոքա են, որոնք բոյսերի կեանքի երեւոյթ:

ների մէջ ապական է, ներգործութիւն աեն ունենում: Միեւնոյն ժամանակ, երեւելի՝ գիտնական Դրէպէլը միայլ թանկագին գիւտ արաւ, նա դրեց ծզօտներ ջրով լի խողովակների մէջ, ուր միեւնոյն ժամանակ կարեւ ածխաթթուգազը եւ այս խողովակները միմեանց ետեւից գրեց արեւանկարի գանազան շառաւիզների տակ: Այնու հետեւ չափելով անջատուած թթուածնի քանակութիւնը սցագ փոքրիկ անօթների մէջ, նա հաստատեց որ գաղի աւելի մեծ արտագրութիւնը տեղի էր ունեցել այն խողովակների մէջ, որոնք դրած էին գեղին եւ կանաչ շառաւիզների տակ, ապա նարնջագոյն եւ կարմիր շառաւիզների տակ: Այս օտարութիւնը իրողութիւնը յետագայ ժամանակում բացատրուեցաւ եւ վերաբերեցին այն հանգամանքին, որ լոյսի ներգործութիւնը ընդուականութեան վերայ աւելի մեծ է այն դիպուածում, և երբ լոյսը անցնում է աղօտ տպակու, քան թափանցիկ ապակու միջով: Այսպէս ուրեմն բայցերի վերայ չեն ներգործում ոչ քիմիական եւ ոչ ջերմային շառաւիզները, մեայն եւեթ լուսոյ շառաւիզներն եւ գլխաւորապէս գեղինը եւ նարնջագոյնը ունին այդ յատկութիւնը: Այս հաստատ իրողութեանը կարելի է յարակցել եւ այն, որ կանաչ լոյսը ներգործում է բոյսի շնչառութեան վերայ այնպէս, ինչպէս խաւառաբը: Սորանով բացատրվում է այն իրողութիւնը, թէ ինչո՞ւ բայցերը տկար են բարձր ծառերի ստուերի տակ, ապրելով կանաչ տերեւների լոյսի ներքոյ:

(Կը շաբաթիուն): Խոր նույն այն ըստ առողջ անունից անուն մին ունից անուն անուն է ան անուն անուն: Ա. ՔԻՇՄԻՇԵՍՆ. կամ Կամաց անուն:

Ա. „Վարժարանի“ մանեկ ական բաժինը փակելով, Խմբագրատանը մեռում էն բաւականաշափ մաֆեկան յօդանածներ: Ունի Խմբագրուրիւնս խնդրում է յարգելի յօդանածագիր պարուներից անյապայ յայտնելու մեջ թէ կը բարեհամեմ արդեօր որ իրենց յօդանածները „Աղբիւր“ հանդիսին յանձները, թէ կը ցականային յետ ստանալ:

Մեծ, պ. Ն. Տէր Ստեփանեանցը՝ լսելով „Վարժարանի՛ առ. համասկեայ դադարման լուրը, եւ համակրելով նորա ուղղութեանը, Սղբանխոնմ հանգանակել էր 20 ո. եւ ուղարկել Խմբագրութեան։ Մենք մասնուցանում ենք մեծարգոյ պարտին մեր խորին շնորհակալութեան հաւասարիք։”

\* \* \*

Կազանի համայստանի հայ—ուսանողները լսելով „Վարժարանի՛ առ. համասկեայ դադարման լուրը, իւրեանց համակրութիւնը եւ խորին ցաւակցութիւնն էին յայտնել, որ մի մասնագիտական-մասնկանարժանան ամազգիր անզամ չի կարողանում զոյութիւն ունենայ Հայոց մէջ։”

\* \* \*

Դնդապիտ Աղէքսանդր Թօնմայեան Մէկիք-Հայկագեանց ուղարկել էր Խմբագրութեան 25 ո. յայտնելով ընդ նմին խր համակրութիւնը եւ յաջողութիւն մարդելով „Վարժարանի՛ գոյութեանց Խմբագրութիւնն յայտնում է խր խորին շնորհակալութիւնը մեծարգոյ պարտին, որը չի զանում ամեն նիմնարկութեանց եւ հրատարակութեանց խր օգնութեան ձեռքը կարկանձնու։ Մեծապատի նկարոնք „Վարժարանի՛ 1 օրինակ նուիրել էր Զնար զիանի Հայոց ծխական դպրոցին, 1 օր նոր բացուելի Սօվոներ զիանի դպրոցին, 1 օր. Ղարաբաղու դպրոցի աշակերտ Արշակ տէր Միքայէկեանցին, եւ 1 օր. Դորպատ խր որդեգիրն։”

\* \* \*

Կարակուրտից մեծ. բժշկապիտ Յարութիւն Միքոնէան Միքիմանեանց գրուեցա Երկու օր. „Վարժարան”, որոնցից մի օրինակ նուիրում է Կատզուանի ծխական դպրոցին ի յիշատակ խր համգույցեալ մօր Թայալ Միքիմանեանի։ Այս առաջին անզամ չէ, որ մեծապատի բժշկապիտը նուիրնել է ամուսն հասարակական հաստատութեանց։”

\* \* \*

Մեծ. սպարտն Խուլզամէերի Աստուածատրեանց նուիրում է „Վարժարանի՛ մի օրինակ Արքերմանի Հայոց Հոգեւոր Դպրոցին։”

\* \* \*

„Եր-Դարին՛ հանդուրդում են Շնայտերից, որ այս տեղի Հայոց դպրոցի ուսուցիչները եւ քանանան բացել են Կիրակօրեայ դպրոց հասականորներին զբացիտութիւն ուսուցանելու համար։ Միանգամայն գովելի է այդ մեռնարկութիւնը, որին ցանկանում էեր կատարեալ յաջողութիւն։”

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ „Աղբիք“ մանկական համելիսի խմբագրութեան № 1 հրատարակութիւնը: „Փայտա-  
շէն է ն ի ը թ ի ց մ ի ն ը է և ս պ ի տ ա կ տ ո ն ն ը“ մանկական վեպը,  
Հիւսխային Միացեալ նամանիցների նախկին նախազամ Զեմս Գար-  
ծիլդի կետանիքց: Այդ վեպը մաս առ մաս տպագրվում էր „Աղբիքի“  
մէջ 1883 թ:—Գինն է 60 կ.

\* \*

Շնօրմակալութեամբ ստացանք էրեսու Ռընամի դասախոսութիւնը  
„Խոյամականութիւնը եւ գիտութիւնը“, կարդացուած 1883 թ. մարտի  
23-ին—Սոոպօնի համարարանում: Դիրքը տպուած է Թիֆլիցում 8.  
Մարտիքրոսեանի տպարանում, միայն չէ լիշուած բարգմանչի անու-  
նը:—Կարդալով գիրքը, երեսում է, որ բարգմանիցը Պօլսեցի պիտի  
լինի եւ մի այն համեստութեամբ ծածկել է իւր անունը:—Հռչականոր  
գիտնական Ռընամի այդ դասախոսութեան ամփոփի բովանդակութիւնը,  
ինչպէս կը լիշեն ընթերցողները, տպագրուեցաւ „Վարժարանի“ ներ-  
կայ 18<sup>83</sup><sub>84</sub> թ. № 1-ում:—

\* \*

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ մեծ պ. Ս. Սար-  
գսեանի աշխատասիրած „Ա. գ ո ւ յ ե ց ո ո ց բ ա ր բ ա ռ ո թ թ“ (Զօկերի  
լեզուն): Այդ գեղեցիկ աշխատութիւնը բանկագին գանձ է հայ—նոր  
լեզուի զինութեան համար. զինն է 2 ո.ութի:

\* \*

Խմբագրութեանս հասած տեղեկութեանցը նայելով, Հաւաքարի  
Ս. Հռիփսիմեան հայ-օրիորդաց դպրոցը գտնվում է սաստիկ աննա-  
խանձելի դրութեան մէջ: Մենք առ այժմ չենք տպում այդ դպրոցի  
մասին ստացած նամակները, միայն մեր սեպուհ տպարտականու-  
թիւնն ենք համարում նրանիրել պ. Թեմական Վերատեսչի խորին ուղար-  
րութիւնը այդ համգամանիքի վերայ:—Նոյնայս լիայոյս ենք, որ պ.  
ալ. Հօգաբարձուք, որ սկզբում այնպէս սիրով ձեռնարկեցին „Հռկի-  
սմինան“ դպրոցի բացմանը, այժմս էլ կը բարեհաճին մի բա-  
ցատրութեամբ փարատելու դպրոցի մասին տարածուած լուրերը:

\* \*

Խմբագրութիւնս պատի ունի յայտնելի ինք ընթերցողներին, որ  
„Վարժարանի“ Մարտ եւ Ապրիլ ամիսների 4-դ եւ 5-դ №-ը լոյս  
կը տեսնեն միասին Ապրիլի վերջը:

Խ Ս Բ Ա Գ Ի Ծ — Հ Ծ Ա Տ Ա Կ Ո Ղ Ն, Խ Պ Ս Ր Ո Վ Ե Ա Ն:

Дозволено цензурою. Тифлисъ, 19 марта 1884 г.

Типография М. Вартанянца и К° Тройцк. нер. д. № 11

# „ՎԵՐԺԱՐԱՆԻ“

ՀԵՌԱԳԻՑ

Եղմիածին. 9 մայիսի.

Մէկ և կէս ժամին յայտարարեցին Ճռողովի ընտրութեան չետեանքը:

**ՆԵՐՍԵՍ** պատրիարքը ընտրուեցաւ  
Կաթուղիկոս ամենայն հայոց 27 ձայնով ընդգէմ հնգի: “Կորա փոխանորդ ընտրուած է Արքազան **ՄԵԼՔԻՍԵԴԵԿԸ**  
19 ձայնով:

20-00-19-13 14-11-00-00  
14-00-19-13 14-11-00-00  
14-00-19-13 14-11-00-00  
14-00-19-13 14-11-00-00  
14-00-19-13 14-11-00-00